

“Droschak”
 ORGANE
 de la Fédération
 Révolut. Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse :
 Rédaction du “Droschak”
 A. R. UZUNJAN
 GENEVE (Suisse)
 LIBRARY

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԴԱՋՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՆԷՅՆԻՄՆԵՐԸ

Զարմանալի ոչինչ չկայ, եթէ հայութեան այս ճրգնածամուտ բազմամուտ են յեղափոխական պայքարի տեսակներն ու թիւը. զարմանալին այն անչափ միամտութիւնն ու համբերատարութիւնն է, որ արտասահմանեան հասարակութեան մի մասը ցոյց է տալիս դէպի այդ անպարտ թախտախնդիրները եւ հասցնում դրանց լրջութեան աստիճանին:

Մի կողմ թողնելով այն բազմատեսակ յարձակումները, որ դաշնակցականները կրում են միշտ մութ անկիւններից. մի կողմ թողնելով այն զբաղաբառութիւնները, որով աշխատում են մեր վարկը ձգել հասարակութեան առջև՝ իրենցը ստեղծելու համար, մենք ստիպւած ենք խախտել մեր սովորական լուծիւնը եւ պատասխանել մի մեղադրանքի, որը մօտ մի տարի է, շահագործւում է այդ պարտնների կողմից: Այս անգամ եւս մենք կանպէ՛ չէինք աւելի այդ խնդրի վրայ, եթէ հասարակութեան միջից չլուէին նոյն ոգով բողբոջներ, որոնց անկեղծութեան մենք չենք կարող հաւատ չընծայել:

“Դաշնակցականների մասնակի շարժումները վառապարհ են, մեր վերաբերմանը ընդհանուր ապստամբութեան մէջն է”, ահա այդ ընդհանուր միտքը, որ մենք լքում ենք մեր խորամաստ յեղափոխականներից: Եւ այս նշանաւոր միտքն արտայայտողները այնպիսի կերպարանք են տալիս իրենց խօսքերին, որից կարելի է եղբայրացիներ, թէ Դաշնակցութիւնը առհասարակ դէմ է ընդհանուր ապստամբութեան գաղափարին եւ թէ միակ իրենք են, որ այդ ապստամբութիւնը առաջ կը բերեն...

Ընդհանուր ապստամբութիւն... կը բռնկի նա մի օր, Հայաստանի բոլոր անկիւններում յանկարծակի դուրս կը պրծնեն հայկական կազմակերպւած զնդերը, եւրօպական ձեւով մարդկած, ամենալեզրին տեսակի հրայաններով զինւած: Թնդանօթները առաջին, ջարդ ու փշուր կաննեն օտանեան զօրքերին, օղբ կը հանեն բերդերը, զօրանոցները, կը պրաւեն քաղաքները...

Աքանջելի՛, հմայի՛չ պատկեր... Եւ այս քաղցր ցնորքների ազգեցութեան տակ ինչպէ՛ս չբարկանալ դաշնակցականների վրայ, որոնք փոխանակ ապստամբութեան դիմելու, այնքա՛ն յիմար են, որ պրաււած են մի ինչ որ մապրիկցիներին ցեղի ջընջումով, օտանեան բանկը պրաւելով կամ Ֆէդայիների խմբի դուրս բերելով...

Բայց ճիշդ է արդեօք այս բոլորը. ձեզ ո՞վ ասաց, որ մենք բացառապէս մասնակի շարժումներ ենք առաջացնելու:

Ընդհանուր ապստամբութեան էք դիմում... Բայց ի՞նչ միջոցներով էք ուզում դրան հասնել: Լուռ ու մոռնջ մնալով:

— Լուռ ու մոռնջ մնալով մեռնել կարելի է ներկայ պարագաներում եւ ո՛չ թէ ապստամբութեան պատրաստել:

Միթէ՞ մենք պարծ ունենք կուբայցիների եւ կրեոպցիների նման յեղափոխական տեսակէտից արդէն կազմ եւ պատրաստ ժողովուրդների հետ, որոնք կարող են լուռ ու մոռնջ մնալ եւ չըքանալ, որոնք ամէն տեսակ դիւրութիւն ունեն հարկաւոր ժամանակը զէնք ձեռք բերելու եւ շարժելու: Եւ միթէ՞ կուբայցիք, կրեոպցիք մասնակի շարժումներով չեն սկսել իրենց գործը. նոյն իսկ այժմ ընդհանուր են արդեօք այդ շարժումները... Չէ՞ որ մեր դիմացն է հայ ժողովուրդը, որը երէկ դեռ սարուկ էր, որը դողում էր հրացանից եւ սարսափով մերժում իրեն օգնութեան եկած զինւած ձեռքը:

Հազիւ այդ ժողովուրդն սթափել է, հազիւ նա նախընթաց կռիւներից ոգեւորւած սկսել է գնահատել զէնքի փրկարար ուժը, հազիւ նրա մէջ դրական յոյս է մտել՝ զէնքով բանալ իր ապստամբեան ճանապարհը, եւ ահա՛ մեր յեղափոխական կոչւածները առաջարկում են մեզ լուռ ու մոռնջ մնալ...

Ընդհանուր ապստամբութեան “պաշտպանները”, մինչեւ իսկ նրանք, որոնք բահ ու բիր էին առաջարկում զէնք պահանջող իրենց խմբերին, գոնէ այժմ պէտք է խոստովանեն զէնք մտցնելու անհրաժեշտութիւնը: Իսկ ի՞նչ երաշխաւորութիւն են նրանք տալիս, որ զէնք տեղափոխելու ժամանակ ընդհարումներ տեղի չեն ունենալ եւ մեր լուռ ու մոռնջ պատրաստական դրութիւնը չի խախտուի: Բացի այդ. ենթադրենք, որ մենք յաջողեցինք ահազին քանակութեամբ զէնք ներս տանել եւ ժողովրդին բաժանել. կարծո՞ւմ էք, որ դա բաւական է ապստամբութիւնը առաջ բերելու, որ ամէն մի հրացան ստացող կարող է ըստ արժանուոյն գնահատել նրա նշանակութիւնը, եթէ միայն փորձով կամ հարեւանի օրինակով չի ճանաչել նրա ուժը... Մենք սեսել ենք զիւղացիներ, որոնք քրդերի յարձակումների դէմ պաշտպանւելու համար Դաշնակցութեան կողմից իրենց արւած զէնքերը նոյն այդ քրդերին են ծախել. տեսել ենք ուրիշներին, որոնք մեր արիւնքը քրտինքով պատրաստած ու տեղ հասցրած հրացանները ջրհոր են թափել քրդերի երեւարւած պէս. մեր հարիւրաւոր ընդբերը, որ օյ. 14-ին, ժողովրդի պաշտպանութեան համար բաժանւած էին, կամ անպէտք մնացին, կամ — աւելի վատ — ծովը ձգեցան. սեպտ. 18-ի հնչակեան ցոյցի ժամանակ նոյն իսկ ցոյցի ղեկավարները ձգեցին ապրճանակները եւ փախան զօրքի առաջին յարձակումին:

Ինչպէ՞վ կարելի է այս բոլորի առաջն առնել. ի՞նչ անել, որ հայ ժողովուրդը այնքան ընդելացած լինի իր հրացանին, որ միայն իր կեանքի հետ միասին համաձայնի կորցնել նրան. ինչպէ՞ս անել, որ այն բարձր յեղափոխական ոգին, որ ամբացել է այսօր հայ ժողովրդի, մի որոշ մասի մէջ միայն, լայնանայ եւ տարածել ամբողջութեան վրայ:

Հէնց զրա համար անհրաժեշտ են մասնակի շարժումները, որոնք դործնականապէս պատրաստում են մեր ժողովրդին. հէնց այս տեսակէտից ահագին նշանակութիւն ունի Խանասորի կռիւը, որի մեծութիւնը հաստատում են դերմանացի, անդլիացի, մինչեւ իսկ ոռւսականատես թղթակիցները. եւ ոչ թէ այն պատճառով միայն, որ մի քանի հարիւր քիւրդ կոտորեցաւ, այլ որովհետեւ կոտորողները մենք հայերս ենք՝ այդ արիւնարբուների նախկին ստրուկները, որովհետեւ այդ օրինակելի կոտորածը յոյս է տալիս լքածներին, յեղափոխութեան բացարձակ կողմնակից դարձնում տատանողներին եւ ժողովրդին դէպի դէնքը մղում...

Ստրկութեան դէմ կռուող բոլոր ժողովուրդներն անցել են այդ շաւղով. մենք եւս զրանով պէտք է անցնենք:

Նոր բան չենք ասում, շատ անդամ ենք այդ կրկնել: Մեզանից ո՛չ պակաս անգամ կրկնել են եւ այդ շարժումների այսօրուայ հակառակորդներից շատերը, որոնք այսօր դուրս չպրուսած յեղափոխական բուն ասպարէզից, բանգործ չունենալով, երզը աւարտած աշուղի նման իրենց նէյնիմ-նէյնիմներն են սկսել...

Բայց գողտրիկ խօսքերից դնգակներ չեն ձուլում, ընդարձակ միճաբանութիւններից հրացաններ չեն պատրաստում, ֆիլիպպականներից քրդերը շանթահար չեն լինում:

Արժէ սակայն մի տեսնել, թէ ովքեր են այդ մեղագրողները, մինչեւ որ ատիճան պէտք է կարեւորութիւն տալ նրանց կարծիքներին: Դրանց մի մասը ոչ ուղեղով, այլ սրտով մտածողներ են, որոնք հասարակական գործերում ղեկավարում են ոչ թէ իրական փաստերով, այլ լոկ իրենց ցանկացածով, սուսնց ուշադրութիւն գարձնելու հպատակին հասնելու հնարաւորութեան պայմանների վրայ. որոնք միշտ պատրաստ են «միութեան», «ընդհանուր ապստամբութեան» եւ այլ հրապուրիչ խնդիրներից կուրթն կպչել: Մի կողմ ենք թողնում նաեւ այն յեղափոխականներին, որոնք սկզբբունքով դէմ են եղել միշտ յեղափոխական ամէն ձեւի դործունէութեան եւ այսօր այնքան են հնացել իրենց առանց այն էլ հին, փթած քարոզներով, որ վաղուց պէտք է թողնէին դրէջը եւ ձեռք առնէին տէր ու դորմեան ու քթախտի տուփը:

Եւ արհամարհանքով ենք դիտում մի նոր երեւոյթ, թէ ինչպէ՞ս վերոյիշեալ պահանջողական յեղափոխականների կատարի թշնամիները այսօր ամենայն ճշգրտութեամբ նոյն միաքն են կրկնում, որ իրենք տարիների ընթացքում ծաղրի են ենթարկել: Թէ ինչպէ՞ս յեղափոխական ասպարէզից տմարդարար փախուստ տաճները իրենց հպու լքումը վարագուրելու համար, պատասպարում են նոյնպէս «ընդհանուր ապստամբութեան» գաղտնարի տակ. թէ ինչպէ՞ս առանց ո՛ր եւ է պատրաստութեան ազմուկ հանող «գործիչները» յանդգնում են պատասպարուել օգ. 14-ը, Ֆէդայիների փայլուն, յաղ-

թական կռիւները: Եւ երբ մենք զէնքերի պատրաստութիւններ էինք տեսնում, աներեւակայելի դժւարութիւններ յաղթելով՝ ժողովուրդն էինք զինում եւ ըստ կարելւոյն խոյս տալիս ընդհարումներին, այսօրուայ ընդհանուր ապստամբութեան պաշտպան, մասնակի շարժումների հակառակորդ «գործիչներն» էին, որ մի քանի անպատրաստ, անվարձ, միամիտ մարդկանց ձեռքը դնում էին դէսից-դէնից հաւաքած անպէտք հրացաններ եւ շտապով «գործի» մղում... Իսկ մենք՝ դաշնակցականներս անգործունեայ, թմբած, վախկոտ արարածներ էինք, որովհետեւ դէմ էինք նըրանց աչք շրջնող հրախաղութեան...

Ընդհանուր ապստամբութեան հարցը ներկայումս քաղցր հրապոյր է բարեսիրտ ուսույնասանների համար. պատրուակ յեղափոխական փարիսեցիներին իրենց տեղը տաքացնելու եւ լաւ միջոց ազգի թշնամիների ձեռքում՝ մեր յեղափոխական կեանքն իսպառ մեռցնելու:

Թո՛ղ յեղափոխութեան թշնամի այդ յեղափոխականները դատապարտեն մեր գործունէութիւնը. — մենք չենք չեղել մեր ճանապարհից, մե՛ղ հետ է ժողովրդի յեղափոխական մասը: Թո՛ղ կաշից դուրս գան ասպցուցանելու մեր ոմբերի վնասակարութիւնը. — մենք կը շարունակենք ահ ու դողի մէջ պահել մեր թըշնամիներին: Թո՛ղ դրանք խրատեն մեզ լուռ ու մունջ մնալ, չմասնել մեր գոյութիւնը, — մենք կը շարունակենք պաշտպանել ժողովուրդը քիւրդ աւազակներից: Թո՛ղ սպառնան մեզ ընդհանուր կոտորածների գուշակութիւններով. — հաստատ գիտենալով, որ սուլթանի համար անպակաս են առիթները, երբ ցանկութիւն կայ կոտորածներ առաջ բերելու — մենք կը շարունակենք մեր կռիւը թշնամի քրդերի հետ: Զնշելով նրանց մի մասը, սարսափ տարածելով միւսների վրայ, մենք «բարեկամ» կը դարձնենք վերջիններին — մի երեւոյթ որ արդէն սկսել է տեղի ունենալ Վասպուրականում, Խանասորի կռից յետոյ:

Մեր անցեալի խուլ պատրաստութիւնները դատապարտում էին. ներկան արքարացրեց մեր անցեալը — այսօր թշնամին զգում է մեր ուժը: Թո՛ղ հիմա էլ դատապարտեն մեր մասնակի շարժումները, հէնց այս մասնակի շարժումներով մենք կը հասնենք ընդհանուր ապստամբութեան բաղձալի օրին — եւ ապագան դարձեալ կարդարացնի մեզ:

Ֆ Է Դ Ա Յ Ի Ն Ե Ր Ի
Ա Ր Ի Ի Ն Ա Ն Ե Ղ, Ճ Ա Կ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ը
Խ Ա Ն Ա Ս Օ Ր Ի Լ Ե Ռ Ն Ա Գ Ա Շ Ո Ւ Մ

Կ Ի Ի Ի Ը *)

Թնդաց Խանասորը. հարիւրաւոր հրացանների միանալ որոտը ցնցեց շըջակայքը, արձագանգ գտնելով սեպացած ժայռերում: Վեանքը տեղի տոււ մահւան...

— «Մի խնայէք փամփուշտին» եղաւ հրամանատարի երկրորդ ու անմիջական հրամանը և մօսինի արա-

*) Շարունակութիւն շամար 12-ից.

գաձիգ հրացանները աչք թարթելու ժամանակ չէին տալիս: Արկուտի արագութեամբ և աւելի խիտ քան կարկուտը, թափուում էին նրա գնդակները մահ սփռելով: ամէն կողմ: Նոյն գնդակը մի անգամից ծակում անցնում էր վրան, մարդ և անասուն՝ չհանդուրժելով իր առջև ոչ մի արգելքի...

Մի ընդհանուր վայնասուն էր որ բարձրացաւ վրաններից. օդը թնդում էր լացի, կոծի և ողբի աղիոզորմ աղաղակներից... Բայց գնդակահար, թաւալը ընկած դիակների օրհասական հռնդիւնները վայրենի ոգևորութեան բոցն էին միայն արծարծում: ... վրէժխնդիր Ֆէրայու սիրտը քար էր դարձել:

Կրակ տեղացէք, անդադար կրակ.
Փսոփ մեր զէնքերին, սուստ է զնդակ...

Երգում է նա և հանգիստ չի տալիս իր հրացանին, որին տաքութիւնից ձեռք դպցնել չի լինում:

Այդ քառասական իրարանցումի մէջ տղամարդկանցից ոմանք աշխատում են փախչել վրաններից, բայց իզուր. որը վրանի դռանն է ընկնում, որը վրանի առջև, մէկը մի քայլ հեռու միայն, միւսը կէս ճանապարհին: Աւելի կատաղիները դուրս են թռչում վրաններից և շտապում դէպի հարաւ ձգւող քարաբլուրները, այնտեղից մահ սփռելու իրենց հանգիստը վրդովողի գլխին: Ատուի ճարակութեամբ վեր էին մագլցում նրանք լերկ քարերից, բայց ազատել 500 տարի տանջւած մի ազգի վրէժխնդրութիւնից, որ այսօր խրոխտաբար գլուխ է բարձրացրել — ցնորք չէ՞ դա: Եւ մերոնց գնդակները քարերին են մետում այդպիսիներին: Երկնային պատուհասի վայրկեանը հասած էր և նրանք շանթահար գլորւում էին...

Հրացանաձուլութիւնը այդպէս անընդհատ շարունակւեց մօտ 15 րոպէ. վրանների մէջ ձայները նւաղում էին հետզհետէ: ... տասնեակ հազարով գնդակներ իզուր չէին արձակւած... Քիւրդերը գրեթէ ոչ մի ընդդիմադրութիւն չարին վրանների միջից. մի քանի գնդակ միայն ստացանք այս ու այն կողմից և այն էլ մէկ թէ երկու անգամ և ոչ աւելի:

«Դէպի վրանները՝ լուեց այդ միջոցին ընդհանուր հրամանատարի ձայնը: Ֆէրայինները միահամուռ «ուռուա՞» գոչեցին և գրոհ տւին վրանների վրայ՝ կենդանի մնացողները կոտորելու: Նախօրօք արձակւած որոշ հրամանի համաձայն՝ խստիւ արգելւած էր սպանել կամ վիրաւորել կանանց և երեխաներին: Եւ այդ հրամանը, որ արշաւող բանակի բարոյական բարձրութիւնն է ցոյց տալիս, ամենայն բարեխղճութեամբ կատարւեց: Արանները հրացանի բռնած ժամանակ կանայք և երեխաներ իհարկէ կոտորւեցան. բայց դա անխուսափելի էր ռազմագիտական տակտիկի տեսակէտից: Իսկ այժմ հանգամանքը տարբեր էր. այժմ հնարաւորութիւն կար նրանց խնայելու, և խնայեցին:

Յուզիչ և միանգամայն բնորոշ է հետագայ դէպքը, որը կարելի չէ լուրթեամբ անցնել: Հարիւրապետի օգնական Ա ա Ր Օ ն (Արիստակէս Զօրեան), — որ այդ կրոււի մէջ տարաւ քաջութեան դափնին, — վրանների մէջ մտնում է թէ չէ, առաջին հոգսն է լինում կտրտել մի քանի կենդանի մնացած հորթերի պարանները և աղաւել նրանց կոտորածից:

Մի Ֆէրայի տեսնում է, որ ընկերներից մէկը սպա-

նել է ուզում՝ երկու երեխայի, որոնք անկողնու մէջ նստած ապուշ-ապուշ նայում են իրենց շուրջը: Իսկոյն անցնում է երեխաների առաջ, հրացանն ուղղում է ընկերոջ կրծքին և սպառնում:

— Եթէ դու կը յանդգնես ձեռք դպցնել այդ երեխաներին, ես էլ քեզ կըսպանեմ:

Մինչդեռ մի քանի րօպէից յետոյ այստեղ ու այնտեղ այրւած վրանների ծուխն է սկսում բարձրանալ քուլայ-քուլայ, մեր յառաջընթաց գունդը կատաղի կոււի է բռնւում սպիտակ վրաններում ապրող զինւորների հետ: Բայց կարճ ժամանակում, այդտեղ էլ դադարում է կեանքը և բոլոր վրանները մեր ձեռքն անցնում: Շատերի ձեռքում հրացանը դաշոյնի է տեղի տալիս: Ցանջւած ազգի վրէժն ու անմահ ընկերների քաղցր յիշատակը վառել են Ֆէրայուն: Նոր կեանք ստեղծելու նըպատակով մահ է սփռում նա իր շուրջը: Անպարտ կանայք և երեխաներ միայն ազատ են մնում Ֆէրայու կատաղութիւնից: Մէկը միւսի ետեւից խորտակում ու այրում են վրանները: Հիմնիվեր կործանում են նաև Շարաֆ բէյի վրանը:

Ընդհանուր հրամանատարի մեծ հոգսերից մէկն էլ լինում է ստուգել, թէ արդեօք սպանւած է Շարաֆ բէյը, թէ յաջողել է փախչել: Այդ նպատակով նա իր մօտ պահած է լինում աղբակեցի մի Ֆէրայի, որ Շարաֆի ծառան լինելով առաջ՝ շատ լաւ էր ճանաչում այդ արիւնարբու ցեղապետին: Գրոհ տալուց յետոյ՝ հրամանատարն անմիջապէս ուղարկում է աղբակեցուն սպիտակ վրանների մէջ դիակները քննելու և իրեն լուր բերելու: Շարաֆ բէյի վրանը մտնելով, աղբակեցին տեսնում է կամ տեսնել է կարծում սրան վիրաւոր ընկած և կնոջը՝ կենդանի: Մեծազօր տիկինը — Շէյխա Համիդի աղջիկը — ճանաչում է իր նախկին ստրուկին և նրա ոտքերն ընկնելով՝ աղաչում է:

— Դու մեր հացն ես կերել, ազատիւր ինձ և ամուսնուս: Ես հայ եմ, կը գամ ձեզ հետ, տարէք ուր որ կ'ուզէք, միայն խնայեցէք մեզ:

— Ոչ որ քեզ չի վնասի, իսկ ամուսնուդ խնայել վեր է իմ ուժից. եթէ կարողանայի էլ, չպէտք է անէի, պատասխանում է Ֆէրային և մի վերջին գնդակ ևս զարկում Շարաֆին:

Շարաֆի վրանի հէնց կողքին, մի ուրիշ փառաւոր վրանում կուչ էր եկել հարիւրապետ Արզիւրահման էֆէնդին: Նրա շուրջը փուլած են իր հաւատարիմ զինւորների անշնչացած դիակները: Տեսնելով մերոնց,

— «Ես քիւրդ չեմ, ես զինւոր եմ, մի սպանէք ինձ՝ աղաչում է էֆէնդին:

— «Իհարկէ պէտք է խնայել քեզ՝ պատասխանում են մերոնք և շանսատակ անում:

Թիւրքի միամտութիւն ինչ շուտ մոռացաւ, որ չարամահ խողխողւած հայ երեխաներն էլ, մատաղ կոյսերն էլ իր ոտներն ընկած՝ խնայել էին խնդրում: Այդ մատաղ կեանքերի վրէժն էր որ եկել էր հիմա պատժելու իրեն:

Անիւր շարունակւում էր կատաղի ոգևորութեամբ ծուխի և արիւնի մէջ շաղախւած, աչքերը կարմրած, Ֆէրայինները կոտորում էին աչ ու ձախ, գետին էին տապալում հանդիպողին:

Մի Ֆէրայի սկսում է «Թամզարա» պարել
— «Ի՞նչ ես անում» հարցնում են ընկերները:

— «Ոտքիցս վիրաւորւած եմ և դրա հմար եմ պարում:»

Եւ իրաւ, գնդակը ջախջախել էր նրա աքի թաթը: Եւ դեռ նրան չէին ուզում կուրի տանն իրել թոյլ և անպէտք մարդու...

Մի քիչ հեռու մի վրանի մէջ լսուած մի ուրիշի մոլեգին ձայնը. «Այս իմ կնոջ փոխարէ այս իմ որդու փոխարէն...» և խփում է նա ու վայր ձգում չորս հոգի:

— «Ես իմ պարտքս կատարեցի, այլև ցաւ չունեմ, եթէ մեռնեմ» մռնչում է ֆէդային, ուրս գալով վրանից:

Յարձակումը այնքան անակնկալ էր և յանկարծական, որ թշնամին, — որոնց մէջ քիւրդ-համիդիական հագուստի հետ նկատուում էր նաև թիւրք գինւորի համազգեստը, — սկզբում միանգամայն շփոթւեց, շշկւեց և գլուխը կորցրեց: Այդ պարագայից օգուտ քաղելով մենք աւելի ևս արագացրինք հրացանաձգութիւնը, որպէսզի թշնամուն ժամանակ չտանք իր ուժերը կարգի բերելու: Երկար ժամանակից յետոյ միայն, քիւրդերից 10-15 հոգի դուրս պրծան, որը լոկ գլուխն ազատելու և որն էլ հարևան քիւրդերից և մերձակայ պահականոցից օգնութիւն խնդրելու:

Լոյսը բացւել էր արդէն... Արևը յաղթական բարձրանում էր Արաուլի ետևից: Իր ճառագայթները խաւարը հալածում էին, խաւարի որդոց կորուստը հաստատելու... Խանասորի դաշտը մի անսովոր՝ ահաւոր տեսարան էր ներկայացնում. խորտակւած և այրւած վերաններ, որոնցից դեռ շարունակ բարձրանում էր մուխը... Հարիւրաւոր դիակներ, փռւած այդ բեկորների տակ... և արիւնը մոխրի հետ խառն՝ վտակներով հոսելիս... Մի կողմ վիրաւորներ ես տեսնում, որոնք աղէկատուր հառաչով գետինն են պռճոկում: Աւրիշ մի տեղ տեսնում ես խելագարի նման դէս ու դէն վազող մարդիկ, որոնք իրենք էլ չեն իմանում թէ ինչ են անում: Գնդակը չի խնայել նաև կենդանիներին. մեծ թւով ըսպանւած են կով, եղ, հորթ, ոչխար, այծ, ձի, իսկ սըրանց վիրաւորների ծանր տնքոցը քարերն էր ճաքեցրնում. խեղճ կենդանիներ...

Թշնամին զօրեղ դիմադրութեան էր սկսում պատրաստել:

Կուրի տեղից մի քանի հազար քայլ հեռաւորութեան վրայ, թէ աչ և թէ ձախ կողմում, կային մի քանի վերաններ, որոնք շղթայից դուրս էին մնացել: Դրանցից մի քսան-երեսուն հոգի բլուրների ետևով եկան և բռնեցին վրանների հարաւային կողմի քարքարոտ դիրքերը և մեր տղերքը վրանների մէջ եղած ժամանակ կըրակ էին անում նրանց վրայ: Իսկ արևմտքից՝ աջակողմեան վրանների քիւրդերը գնալով աւելի և աւելի բազմաթիւ էին դառնում և աշխատում էին բռնել Արաուլի ստորոտի դիրքերը, որպէսզի գրաւած լինելով մեր առջևի և ետևի լեռները, մեզ թողնէին դաշտի մէջ և մինչև վերջին մարդը կոտորէին:

Տափարակ դաշտի վրայ երկար մնալը անստուգիւն կը լինէր. շուտով մենք գործ պիտի ունենայինք օգնութեան եկող թէ քիւրդերի և թէ տաճիկ կանոնաւոր զօրքի անհամեմատ բազմաթիւ հրոսների հետ: Անհրաժեշտ էր ժամ առաջ դիրքեր գրաւել, նորեկների հետ կուրը շարունակելու համար:

— «Տղերք, դէպի դիրքերը» որոտաց հրամանատարի ձայնը, և վրանների մօտ կուռոյներից մի մասը շտապեց դէպի դիրքերը:

Պատերազմական խորհրդի յատուկ կարգադրութեամբ, յարձակումն սկսելուց առաջ, մանր խմբեր արդէն գրաւած էին նահանջի տեսակէտից կարևոր համարւած կէտերը: Հեծելախմբի վրայ էր դրւած դիրքեր գրաւելու պատասխանատու և ծանր գործը, և նա փայլուն կերպով կատարեց իր ստանձնած պարտականութիւնը:

Յարձակման դեռ սկզբին՝ հեծելախումբը, որ բանակած էր կուրի վայրից 200 քայլ հեռաւորութեան վրայ դէպի հիւսիս՝ լեռան ստորոտը, — կոտրեց իր շղթան և երկու մասի բաժանւելով՝ մի-երկու հազար քայլ դէպի յետ քշեց և գրաւեց դաշտի երեսին բարձրացող երկու քարքարոտ բլուրներ, որտեղից կարող էին տեսնել աչ և ձախ կողմերը, և եթէ ձիաւորներ մօտենալու լինէին՝ նրանց առաջն առնել:

Դեռ հետևակները նոր էին յարձակւել վրանների վրայ և հեծելախմբի երկու մասերը գտնուում էին արդէն այդ նոր դիրքերի մէջ, երբ տեսնւեցաւ հրամանատարի օգնականը, որն ամենայն արագութեամբ ձին քշում էր դէպի հեծելախումբը: Նա նկատել էր, որ 50-ի չափ քիւրդ ձիաւորներ հեծելախմբի աջ կողմից, այն է արևմտքից մօտենալով՝ մի պտոյտ էին գործել բռնելու համար Արաուլի ստորոտի ամենաբարձր դիրքը, որ այդ ժամանակ դատարկ էր: Օգնականը այդ մասին յայտնեց թէ չէ, հեծելախմբից երկու հոգի ջոկւեցան — սրանցից մէկը քահանայ — և ուղիղ գծով սլացան դէպի այդ բլուրի գագաթը, ուր հարկաւ աւելի շուտ հասան, քան քիւրդերը, որոնք ստիպւած էին մի պտոյտ անել: Ամբողջ մի ժամ այդ երկուսը դիմադրում են այդտեղ քիւրդ ձիաւորներին և թոյլ չեն տալիս դիրքին մօտենալու: Քիւրդերը կորցնելով իրենցից մի քանիսին և տեսնելով որ անկարելի է մօտենալ բլրին, յետ են դառնում և ուզում են աւելի մեծ շրջան անելով՝ գրաւել այդ բլրի և Արաուլի գագաթի մէջտեղերում գտնւած դիրքերը: Բայց թողնում են մի քանի հոգի բլրի ստորոտում ֆէդայիներին զբաղեցնելու, մինչև միւսները տեղ կը հասնեն:

Քիւրդերի այդ մտադրութիւնը ևս գուշակում են մերոնք և լուր տալիս հեծելախմբին, որն անմիջապէս 5 հոգի արագարշաւ օգնութեան է հասցնում երկու ընկերներին:

Այդ ժամանակ հնչել էր արդէն նահանջի փողը և տղերքը խումբ-խումբ վերադառնում էին վրաններից: Արևմտեան բլուրների ետև եղող քիւրդերը, տեսնելով որ հետևակները քաշւում են հետոհետէ, կատաղութեամբ արձակում էին հրացանները այդ հինգ հոգու վրայ, բայց չէին համարձակւում դաշտ իջնել: Գնդակները աջից ու ձախից սուլում էին նրանց կողքով, մինչդեռ նրանք քշում էին ձիերը դէպի Արաուլի ըստորոտը: Խուժքը անվնաս հասաւ իր երկու ընկերների մօտ, որոնք կատաղի կուրի մէջ էին:

— Հը, կուրներդ շատ տաք է երևում, դիմում է նրանցից մէկը քահանայի ընկերոջը, որ մի նախկին վաճառական էր:

— Կուրս ո՞րն ա... պատասխանում է նա, կոտորում ենք էս շան-ծնունդներին:

Օգնութեան հասնող հնգից մէկը, որ հեծելախմբի

հրամանատարի օգնականն էր, մնում է երկսի մօտ, որպէսզի դիւրութեամբ կարողանան հեռու պահել քիւրդերին դաշտի մէջ և ապահովել հետեակների նահանջը: Միւս չորսը սկսում են բարձրանալ լեռը՝ դիրքերը բռնելու և առաջն առնելու այն քիւրդերի, որոնք մի աւելի մեծ շրջան գործելով՝ ուզում էին բարձրանալ այդ կէտերը: Մինչև քիւրդերի հասնելը, մեր տղերքը արդէն շատ առաջ գրաւել էին այդ դիրքերը. քիւրդերը ապշած, լուռ ու մունջ յետ դարձան առանց հրացան արձակելու:

Մեծ էր ընդհանրապէս քիւրդերի զարմանքը, երբ որ դիրքը որ հասնում էին, մերոնց կրակին էին հանդիպում: Նրանք շփոթեցան բոլորովին. փախչող փախչողի էր, գլորում են ձին ու ձիաւորը ահագին բարձրութիւնից ու ձորերը դիակներով լցնում: Մեր նոր հրացանները հօ, հրաշքներ էին գործում: Նրանց գնդակները մերոնց չի հասնում, իսկ մեր մօսինը 2,700 քայլից ձիաւորներ է գլորում: Ուր փախչեն, ինչ անեն: Գնդակ է որ գալիս է ձարները կտրած. քշեցին դէպի Քաւրաւա բլուրը, որտեղից հեշտ էր մերոնց գնդակի կապերը Բայց այնտեղ էլ Պիծի-Աշոտն ու ասորի Եւնանն են հսկում իրենց ընկերների հետ. բոլորովին անսպասելի կերպով կուր են բռնում և այդտեղ:

Կէս ժամ չանցած սկսաւ երևալ նահանջող հետեակների շարքի ծայրը. նոյն ձանապարհով որով եկել էին չորս ձիաւորները, նրանք ևս բարձրացան ամենայն ապահովութեամբ և անցան Արաուլի բարձրագոյն գագաթները, որոնց պահպանման համար նախորդ գիշերը արդէն տասը ընկեր էր թողւած:

Իհարկէ այդ տասը հոգին չէին կարող գրաւել բոլոր դիրքերը և հետեւաբար հետզհետէ հասնող հետեակները ցրիւ էին գալիս զանազան ռազմագիտական կէտերի վրայ, որպէսզի բոլորովին անկարելի դարձնեն քիւրդերին մի քայլ անգամ դէպի վեր առաջանալ:

Այսպէս ուրեմն բանակի մի մասը զատուելով՝ հեծելախմբի աջակցութեամբ դիրքեր գրաւեց գլխաւոր ուժի վերադարձն ապահովելու, իսկ այդ մեծագոյն մասը տակաւին զբաղւած էր վրանների մօտ «իր հաշիւը» վերջացնելով . .

Օգնութիւն ստացած թշնամին այժմ անհամեմատ ահագին թիւ էր կազմում:

Երկար օրերով վաստակած, ծանր բեռը շալակին և այն էլ տափարակ դաշտի վրայ գործ ունենալ թուով անհամեմատ բազմաթիւ թշնամու հետ, որ թէ յոգնած չէ և թէ ձիով, և ինչ որ գլխաւորն է՝ ծանօթ շրջակայքի ծակ ու ծուկին — շատ էլ հաճելի չէր: Հարկաւոր էր շտապել դէպի դիրքերը, մանաւանդ որ վերանների հետ «մեր հաշիւը» գրեթէ վերջացրել էինք: Վրանների մեծագոյն մասը քար ու քանդ էինք արել, մի մասը հրդեհել, բնակիչներից արական սեռը կոտորել: Թէև կողոպտելն արդելւած չէր, բայց աւարի չը տրեցան վրանները. Ֆէդային իր արժանապատուութեան հակառակ է համարում այդ, նա աւագակ չէ: Տղերքը վրաններից վերցրին միայն այնպիսի իրեր, որոնք կարող էին յիշատակ լինել իրենց յաղթութեան. օր Շարաֆ բէյի սուրը, ուսնոցները, պաշտօնական գլխարկը, Շարաֆի և Արդիւրահամանի շքանշանները, և համիրիէ գունդեր կազմելու համար սուլթանի Շարաֆին տւած հրովարտակը: Իսկապէս աւար կարելի է համարել բա-

ւականաչափ ձիաններ և 10-12 գոմէշ՝ մեր վիրաւորներին ու յոգնածներին յետ տանելու համար: Մեզ հետ վերցրինք նաև հրացաններ, որոնցից շատերը արմենական նահատակներից էին յափշտակւած: Այն հրացանները, որ հնարաւորութիւն չունեցանք վերցնելու, ջարդու փշուր արինք: Կարօն այդտեղ էլ մեծ ծառայութիւն արաւ մեզ. լինելով հմուտ զինագործ, նա վայրկենաբար անգործածելի էր դարձնում իր ձեռքի տակ ընկած բոլոր հրացանները, նրանց էական մասերը փչացնելով:

Երեք վիրաւոր ունէինք:

Մեզ համար ամէն բան մինչև այդ կէտը շատ յաջող էր անցել. մենք ամէն տեղ կանխել էինք քիւրդերին, որոնք այժմ գնալով աւելի և աւելի բազմանում էին և իրենց թւի վրայ յոյս դրած՝ աւելի կատաղի յարձակումներ էին գործում: Մեր գլխաւոր գործը պիտի լինէր հմուտ տակտիկով պաշտպանել տղերանց վերջին խմբի նահանջը դաշտից, որովհետև քիւրդերը ետեւից հանգիստ չէին տալիս:

Կուր շարունակում էր անխնայ և կատաղի կերպով:

Տեսարանը ոգևորիչ էր: Գաշնակցութեան դրօշակները յաղթական ծածանում էին ամպածրար լեռների կատարներում: Ֆէդայիները անհուն յափշտակութեան և հրճանքի մէջ կուռում էին դիւցազների պէս. . .

Շարաֆի յանկարծական անկումը, և այն էլ Փլահի ձեռքով, կատաղեցրել էր օգնութեան եկողներին: Աշիրաթի հպարտութիւնը և զուգէ նոր հրացաններ ձեռք բերելու ծարաւը դրդում է նրանց գրոհ տալու նահանջողների վրայ: Կարծես այդ ժամին էին սպասում մերոնք. ամէն մէկը մի քար իր առաջը դրած, գնդակ է որ թափում է նրանց գլխին: Ընկնում են քիւրդերը, խրտնում են ձիերը և հարազատ տերերին ոտի տակ առնելով դէս ու դէն վազում. . . «Պատուի տեղ է՝ կանչում են մերոնք և կրակ տեղում. . .

Պակաս կատաղութեամբ չէր կուռում սակայն և թըշնամին. նրա միախուռն արձակած գնդակները, թափուելով մեզ շատ մօտ տարածութեան վրայ, փշուրում էին քարերը, քանդում հողը և փոշու ամպեր բարձրացրնում երկինք: Այդպէս արձակելու ընդունակ է միայն կանոնաւոր զինւորը և ակներև էր որ թշնամիների թըւում գտնուում էին նաև տաճիկ զինւորներ, որոնք օգնութեան էին եկել պարտուած թշնամուն:

Չնայելով կրակի այդ հեղեղին, մերոնք օրինակելի սառնասրտութեամբ անվրդով նշան էին բռնում և առանց շտապելու արձակում հրացանը: Մեզնից ամէն մէկը աշխատում էր որ իր արձակած գնդակը անվրէպ իր նպատակին հասնի, և իրաւ թշնամիներից շատ շատերը մէկը միւսի ետեւից թաւալղոր ընկնում էին գետին: Թշնամու կողմից ամէն անգամ մէկը ընկնելիս՝ ու գեորութեան և հրճանքի աղաղակներ էին դուրս պրծնում մեր կրճքերից:

— «Կեցցէ՛ Գաշնակցութիւն», գոչում է մէկը գլորելով մի քիւրդի:

— «Կեցցէ՛ հայ յեղափոխութիւնը» աղաղակում է միւսը. և Ֆէդայիների ամբողջ շարքեր ահեղ գոչումներով ձայնակցում են իրար. . .

Մինչդեռ նորանոր խմբեր գալիս սոււարացնում են թշնամու արդէն ահագին թիւը, մերոնք էլ աւելի էին ոգևորում և իհեծուկս նրանց որոտաձայն երգում:

Կուեցէք, տղերք, կուեցէք քաշ-քաշ
Ասկիներ սրտով թշնամու առաջ...

Եւ երկարում են ձայները, երկարում, և բարձրակա-
տարու աւանդախոր հայ լեռները նրանց արձագանգը
շատ հեռու են տանում... Կրկնապատկում է Ֆէդա-
յու ոգևորութիւնը, իսկ թշնամին սարսափահար է լի-
նում այդ անզուսպ ոգևորութեան առջև. նրա մտքի
մէջ վերստին կենդանանում են առասպելները Ֆէդա-
յու գերբնական ուժերի մասին.

— «Սատանի նման ճարպիկ, հնարագէտ և ուժեղ է
ջան-Ֆէդային. գնդակը չի օգնում նրա դէմ. ընկնում
է նա, բայց դարձեալ կեանք է ստանում ոգիների
շնորհիւ... »

Սարսափից չի համարձակում նա մօտ գալու... լի-
նում են բացառիկ խմբակներ, որոնք յանդգնաբար յար-
ձակում էին մեզ վրայ, բայց մեծ կորստով յետ էին
փախչում. իսկ մեծագոյն մասը գլուխը կորցրած, շարու-
նակ այս ու այն դիրքերն էր փախչում. Ֆէդայու գնդա-
կը հանգիստ չէր տալիս նրան...

Նահանջը կատարում էր կանոնաւոր և զինւորական
կարգով: Բանակի մի մասը պառկած՝ արագ հարւած-
ներով զբաղեցնում էր թշնամուն, ժամանակ տալով
միւս մասին անվնաս՝ դիրքերը բարձրանալու. երբ ա-
ռաջին յարմար դիրքը գրաւած էր լինում, այնուհետև
միևնոյնը անում էին բարձրացողները, յետ մնացածնե-
րին ժամանակ և դիւրութիւն տալով նահանջելու:

Այդ վերին աստիճանի անշփոթ և կանոնաւոր նա-
հանջին ենք պարտական գլխաւորապէս, որ մեր բանա-
կը առանց զգալի կորուստի դաշտից բարձունքը ելաւ.
չորս թանկագին ընկերների դիակները միայն թողել
էինք դաշտում...

Եւ անկարող զգալով արդէն Արաուլի բարձունքում
ամրացած գլխաւոր ուժի վրայ յարձակելը, թշնամին կա-
տաղաբար ընկնում էր ստորոտում. ուշացած Ֆէդայի-
ների վրայ, գոնէ նրանցից իր վրէժն առնելու: Բանակի
սարը քաշելուց օգտւելով, քիւրդերը կարողանում են
ձիերից իջնել և մտնել քարերի ետևը: Առիւը տաքա-
նում է. շատ տեղ մերոնք կուռում են 20 քայլից: Իզո՞ւր
հրամաններ է տրւում վեր շտապելու, մերոնք առիւծ
են կտրել. ո՞վ կարող է նրանց քարերից պոկել: Տեղ-
տեղ նրանք դուրս են գալիս իրենց դիրքերից, յարձակ-
ւում թշնամու վրայ, ոչխարի պէս առաջ արած քշում,
հեռացնում և կրկին վեր բարձրանում...

Յուսահատ օրհասական կռիւներ տեղի ունեցան
այդտեղ և այդտեղ երևան եկաւ իր հոգու ամբողջ
մեծութեամբը և անվկանդ քաջութեամբը Կարօն,
որ իրաւամբ օրւայ հերոսը հանդիսացաւ:

Նա շատ վաղուց ծարաւի էր թշնամու արիւնին: Ա-
ռաջին անգամ մասնակցելով յեղափոխական կռիւն՝ տեն-
դային արագութեամբ և մոլեգին յանդգնութեամբ շա-
րունակ մի դիրքից միւսն էր վազում, որոնում թշնա-
մուն աւելի մօտիկ դիրքեր, կարելի եղածին չափ մեծ
թւով քիւրդ կոտորելու համար: Առաջնակարգ հրացա-
նաձիգ լինելով՝ նա մահ էր սփռում իր հասած տեղը
և թշնամին սարսափած՝ յետ էր փախչում Կարօյի առ-
ջև: Բայց նա չէր յագնում. առանց երկար մտածելու
իջնում էր իր դիրքից և բոլորովին միայնակ իբր մարմ-
նացեալ վրէժխնդրութիւն հալածում քիւրդերին:

Այդ վտանգաւոր քայլերի ժամանակ իզո՞ւր ընկեր-

ները ձայն էին տալիս նրան, զգուշացնում, նոյն իսկ ըս-
պառնում ուշ չէր դնում Կարօն, բաւական էր որ մի
պատեհ առիթ ներկայանար թշնամու հետ կուռելու, ըն-
կերներ նեղ դրութիւնից ազատելու — և ահա՛ այնտեղ
էր Կարօն:

Բանակի մեծագոյն մասը արդէն անառիկ դիրքերումն
էր գտնւում և հեծեալներից քահանան ու իր ընկերը
վաղուց հեռացել էին Արաուլի ստորոտի դիրքից, նրա
պաշտպանութիւնը յանձնելով նորեկներին, որոնք հեր-
թով կուռում էին այդ դիրքի վրայ և բարձրանում, թող-
նելով այդ գործը ուրիշ յաջորդներին: Այսպէս շարու-
նակաբար մէկը միւսին յաջորդելով, վերջին կուռողը լի-
նում է Փար-Հատը: Սա էլ տեսնելով որ ինքը միայնակ
է և կարող է նեղն ընկնել, օգնութիւն է խնդրում վեր-
ջին խմբի մէջ գտնւող 20 տարեկան մի երիտասարդից
Սաղաթէլից: Երիտասարդը յօժարութեամբ նստում է
նրա կողքին, քարի ետևը և այդ երկուսը շարունա-
կում են կուռել և յետ պահել թշնամուն, մինչև որ
խմբի վերջին մարդը ապահով կերպով բարձրանում է
լեռը:

Այդ երկուսի դրութիւնը հետզհետէ վտանգաւոր է
դառնում: Մի խումբ քիւրդ զարտուղի ճանապարհներով
և աննկատելի կերպով դիրքից-դիրք առաջ գալով՝ մօ-
տենում է նրանց և պաշարում: Փար-Հատն ու Սաղա-
թէլը չէին կարող այլևս դուրս դալ քարերի տակից
լեռը բարձրանալու համար, իսկ այնտեղ երկար մնալն
էլ մահ էր նշանակում: Կարօն, որ այդ երկուսից մօտ 2,000
քայլ հեռու բարձրում ամրացած է լինում, հաստատ
գիտէր որ ուշացած ընկերներ կան և թէ Փար-Հատը
ցածրում մնացածների գալուն է սպասում: Սակայն ըն-
կերների ուշանալը Կարօյին մտատանջութեան մէջ է ձը-
գում, և նա իր դիրքից բարձրանալով, նկատում է նը-
րանց պաշարւած լինելը: Գուշակելով նրանց վտանգա-
ւոր կացութիւնը, իսկոյն իր մօտ եղած միակ ընկերին
ուղարկում է հրամանատարի մօտ օգնութիւն խնդրելու:
Այդ ժամանակ հրամանատարը բանակի հետ գտնւելիս
են եղել բաւական հեռու, 3-4 ժամայ հեռաւորու-
թեան վրայ:

Օգնութիւնն ուշանում է... անհամբերութիւնը խեղ-
դում է Կարօյին: Այդ րօպէին Փար-Հատի դիրքի մօտ
արիւնշաղախ գետին է ընկնում մեր ընկերներից մէկը:
Թանկագին ընկերը իր աչքի առջև ընկնելը այնքան
խորին տպաւորութիւն է անում Կարօյի զգայուն սրտի
վրայ, որ մոռանալով ինքն իրեն, արհամարհելով ան-
խուսափելի վտանգը, վճռում է միայնակ ցած իջնել և
օգնութեան հասնել պաշտպանութեան կարօտ ընկեր-
ներին: Եւ նա գնդակների տարափի տակ, կայծակի ա-
րագութեամբ ցած է դրուում ուղղակի դէպի պաշար-
ւածները: Երբ այնքան է մօտենում, որ թշնամուն գըն-
դակահար անելն աներկբայելի է, առանց երկար խոր-
հելու կուշ է գալիս մի քարի տակ — իհարկէ ոչ այն-
քան ապահով տեղ — և սկսում է կայծակի արագու-
թեամբ կրակ թափել թշնամու գլխին: Այդպիսով ժա-
մանակ է տալիս պաշարւածներին դուրս գալու իրենց
դիրքից և բարձրանալու: Իսկ թշնամին նրա հրացանի
անվրէպ հարւածներին չբիմանալով՝ թողնում է ու փախ-
չում: Կարօն ազատում է երկու ընկերներին. բայց դը-
րանով էլ չի գոհանում և օգնութեան հասած երկը ըն-
կերների՝ Կրետացու (Աստուածատուր Միրզայեան), Գրի-

գործի ու Յարութիւնի հետ սկսում է հալածել պաշարողներին՝ աւելի քան 14 հոգու և միայն ինքը ուժը ձիաւոր է դըրում նրանցից:

Փար-Հատի դիրքի մօտ նահատակում են հետզհետե Ռուբէն Տէր-Վարապետեան, զինւոր Արշակ Ոսկանեանը և յետոյ, ճանապարհին, այնքան հերոսաբար դիմադրող Սաղաթէլ խան Չօհրաբեանը: Այս վերջինս էր որ Փար-Հատի հետ, առաւօտեան ժամը 9-ից մինչև 3 կէս օրից անց, կռիւ էր մղում եօթնպատիկ աւելի զօրեղ թշնամու դէմ և այն էլ այն միջոցին, երբ բոլոր ընկերները անհետացել էին աչքից և ոչ մի տեղից էլ օգնութեան յոյս չկար: Հերոս Ֆէդային դիրքում 7 ժամ պաշտպանեց, իսկ ազատելուց յետոյ վիրաւորում է երկու տեղից՝ կողքից և ոտքից: Թշնամին նրա ընկերներին ժամանակ չի տալիս վերքը կապելու, և մինչդեռ արիւնը առի պէս հոսում է իր վերքերից, նա կուռում է և բարձրանում անդադար...

Վերցնելով նահատակած ընկերների զէնքերը, ինչպէս նաև սպանած քիւրդերինը, մի-երկու ձի և վիրաւոր ընկերին՝ Սաղաթէլին, Վարօն Փար-Հատի հետ հասնում է լեռան գագաթը, բանակի մօտ:

Այդտեղ, բանակում, արդէն սպանած էին կարծում բոլոր այդ անվեհեր ընկերներին, և կարելի է երևակայել թէ ինչ անհուն ուրախութեամբ, արտասուքը աչքներին դիմաւորում էին նրանց: Բայց այդտեղ մի սև ամպ նսեմացնում է ընկերների հրճանքը. հազիւ հասած՝ արիւնաբամ և ուժասպառ վայր է ընկնում Սաղաթէլը և երկու ժամից յետոյ, ընկերների տաք համբոյրների տակ աւանդում է իր մաքուր հոգին, իր սիրած Հայաստանի հողի վրայ: Նա այդ օրը կուռել էր արշաւախմբի ամենից անվեհեր երիտասարդի կողքին, և սա ակնածութեամբ ու յարգանքով էր խօսում այն կատարեալ պաղարիւնութեան ու անվախութեան մասին, որ ցոյց էր տւել այդ պատանին տագնապի րօպէներում:

* * *

Ժամը 10-ը կը լինէր որ բանակի գլխաւոր ուժերը արդէն Արաուլ բարձրացած էին: Մերոնք գրաւել էին աւելի քան 12 դիրք, որոնցից ամէն մէկն էլ օրւայ մէջ ենթարկւեցաւ աւելի կամ նւազ բուռն յարձակումների:

Քիւրդերը, որոնց թիւը արդէն երկու հազարի հասել էր, ամբողջ օրը պտրտում էին լեռան շուրջը և դիրք դիրքի ետեից փորձում էին խլել մերոնց ձեռքից: Բայց չնայելով որ նրանք միշտ 300 կամ 400 ձիաւորով էին յարձակում դուրսում ամէն մի կէտի վրայ, — ուր անհամեմատ սակաւաթիւ էին մերոնք, — և հակառակ լեռնային կռիւներում իրենց ունեցած վարպետութեան, նրանք չյաջողեցան մեզ դուրս հանել և ոչ մի դիրքից: Ամէն մի յարձակումի նրանք կորուստ ունեցան և ստիպւեցան յետ քաշւել մի ուրիշ կէտի վրայ փորձելու իրենց բախուր, բայց դարձեալ նոյն հետեանքով:

Վախը թէև չդադարեց, բայց նախկին կատաղութեամբ էլ չչարունակեց. ամէն տեղ սկսաւ թուլանալ. միայն արևելեան մի դիրքում — Թաւրաւա բլրում — դեռ շարունակում էին խմբել և կուռել: Վէս օրին այդտեղ է հասնում նաև արիւնխում շիկակ ցեղի պետ Ջաւար աղան: Սա անյայտ մարդ է. Ջաւարն այն ծանօթ աւազակն է, որ ամբողջ երկու ամիս ճարայի բեր-

դում պարսից կառավարութեան դէմ դնելուց յետոյ, ամրացաւ սահմանագլխի սարերում և այնտեղից սկսաւ Սալմաստն ասպատակել: Առնելով Ֆէդայիների երևալու լուրը, այժմ եկել էր նրանց «կոտորելու»: Մի քանի հարիւր ձիաւորներ կուռում են մեր տասը ընկերների հետ, որոնք դիմադրում են հերոսի նման, մինչև մի խումբ էլ օգնութեան է հասնում նրանց:

Մի ուրիշ դիրքում, դեռ նոր էին նստել հանգստանալու, և ինչ են տեսնում. տասնի չափ զինւած քիւրդեր մօտիկ գագաթից իրենց են նայում: Նրանք մօտերքում ապրող քիւրդեր են, որոնք հրացանների ձայնին եկել են մի բան իմանալու: Նրանք, ինչպէս երևում է, սկզբում քիւրդի տեղ են ընդունում հայերին, որովհետև հրացաններն ուսերից ցած չէին բերում: «Տղերք ջան, հասէք» կանչեց Ֆէդայիներից մէկը և 4-5 հոգի առաջ թռան: Քիւրդերն անմիջապէս դիրքեր բռնեցին, մերոնք էլ հասան և մի քանի րօպէից յետոյ արդէն կուռում էին մօտ քսան քայլից: Մերոնց համարձակութիւնը յանդգնութեան էր հասնում. չնայած անընդհատ տեղացող կրակին՝ նրանք դուրս եկան դիրքերից և քիւրդերի վրայ յարձակեցին հրացանների միախուռն հարւածով: Մի քիւրդ և երկու ձի արդէն կուռում էին մահաւան հետ, տեսնելով որ մերոնց ձեռքից պրծնելը դժուար է, քիւրդերը թողին դիրքերն ու փախան: Մերոնք նրանց ետեից. թշնամին երկու զոհ ևս տւեց ու անյայտացաւ դիրքը մնաց մերոնց ձեռքում: Այդ միջոցին մեր ընկերներից մի ուրիշ խումբ էլ արևմտեան կողմում՝ Խանիկի դիրքում են թեթև կուռ բռնում և կորստով յետ մղում քիւրդերին:

Արդէն բոլոր դիրքերն ապահովւած են:

Թեթև խմբակներ — հետիոտն կամ ձիաւոր — շարունակ մի կէտից միւսն էին թռչում վտանգւած դիրքերը զօրացնելու և կամ ձիւն էին հասցնում կուռողներին:

Մինչ մերոնք մի մասը դեռ կատաղաբար կռիւ է մղում Թաւրաւայի բլրի վրայ, միւս մասը հանգստանում է:

Մի քանի դիրքերում կատարեալ անդորրութիւն էր տիրում. տղերքը հաւաքւելով իրար մօտ, բաց էին անում իրենց պարկերը, գաթա ու հալւա ուտելով ճաշում էին ու խօսակցում օրւայ եղելութիւնների մասին, և ընկած թանկագին ընկերներին յիշում... Այդ դիրքերում էլ հանգստանում էին նաև մեր վիրաւորները, նախնական խնամքներն ստանում: Բանակի Ֆէդայի-բժիշկը, թեւերը վեր քաշած, մտել էր իր բուն դերի մէջ. լուանում էր նրանց վերքերը, դեղ դնում ու կապում:

Դեռ չմթնած՝ պատերազմական խորհուրդ դումարեց, պարզ էր խնդիրը. պէտք էր մնալ ու շարունակել կռուիւր թէ նահանջել:

Արշաւանքը հասած էր իր նպատակին: Մարդիկցիները բնաջինջ եղած էին: Ֆէդայիների երևումը կայծակի արագութեամբ տարածւելով շրջակայքում՝ անլուր սարսափ էր ազդել, մի քանի ժամում սահմանագլխի մօտ գտնւած բոլոր վրանները տեղափոխւել էին երկրի խորը՝ ապահով տեղեր. կարծես մի փոթորիկ սրբել ու քրշել էր դրանց բոլորին:

Բայց միւս կողմից՝ մինչև ժամը 4 — կէս օրից անց — բանակի շուրջը հաւաքւել էին մօտ 2,000 քիւրդ ձիաւոր, որոնց մէջ կային նաև Բաշ-Ղալսոյի տաճիկ զինւորներ, և դեռ սրանք 4 փարսախ հեռաւորութիւնից էին եկել: Եթէ հետեւեալ օրն էլ նոյն տեղը մնայինք՝ եր-

կու օրւայ ճանապարհից, մինչև իսկ Ղանի մօտաբնակ քիւրդերը օգնութեան կը հասնէին և կարելի է 10,000 հոգի շրջապատէին մեզ:

Այդ ասեմք զգալի տարբերութիւն չէր ունենայ բանակի համար. դրանից աւելի մեծ թւի դէմ կարող էր նա պաշտպանել լեռը: Բայց ամէն մարդ իր ունեցած փամփուշտի կէսն արդէն սպառած էր: Կարօն արդէն իր 400 փամփուշտը վերջացրել էր ժամը 3-ին, և հետագայ կռիւների համար վերցրել էր միւս ընկերներից:

Բանակն ունէր հետևաբար ծայրայեղ դէպքում երկու օրւայ փամփուշտ և շատ-շատ մէկ օրւայ ուտեստ: Մէկ օրից յետոյ թշնամիների թիւը այնքան մեծ կը լինէր, որ ձեղքել-անցնել կարելի չէր լինի, իսկ լեռան վրայ մնալ ու կուել երկար ժամանակ անհնար էր փամփուշտի և հացի սակաւութեան պատճառով: Երկու պարագայումն էլ — ձեղքէինք թէ մնայինք — եթէ բանակը ամբողջապէս չկոտորէր, կը կորցնէր սակայն իր մեծագոյն մասը: Իսկ այդ կորուստը կը նսեմացնէր օրւայ փառաւոր յաղթութիւնը և Ֆէդայու առասպելական սարսափն էլ կը ոչնչանար քիւրդերի մէջ:

Եւ պատերազմական խորհուրդը բոլոր այդ նկատուների հիման վրայ, գրեթէ միաձայն որոշեց նահանջել:

Հրահանգ տրւեցաւ հարիւրապետներին, յիսնապետներին և տասնապետներին կարգի բերել իրենց մարդկանց և պատրաստ մնալ նահանջն սկսելու, մութն ընկնելուց յետոյ: Խաւարի մէջ հետքները կորցնելու համար, կրակը պիտի դադարեցնէին և բաժան բաժան խրմբերով պիտի սկսէին նահանջը:

Իջնելու ճանապարհը արդէն ուսումնասիրած էր յիսնապետ Գուլմանը (Կ.) մի ուրիշ ընկերով հետ. Արաուլի մէջքերից մէկն էր դա, որ երկու կողմում ձորեր ունենալով՝ հասնում էր այդպէս մինչև ստորոտը: Պաշտպանողական կուի շատ յարմարութիւն ունէր այդ էջքը: Ապառաժէ դիրքեր, բնութեան ձեռքով ստեղծած, և քիւրդերի անընդհատ կռիւների միջոցին ևս արհեստական կերպով ամրացրած, կողք կողքի կպած իջնում էին մինչև մէջքի կէս ճանապարհը:

Այդ երկուքն էլ մնացին մինչև երեկոյ այդ էջքի մօտ, հետևելով քիւրդերի շարժումներին, որպէսզի իսկոյն իմաց տային բանակին, եթէ սրանք փորձէին փակել նահանջի այդ ճանապարհը: Լաւ գիտենալով քիւրդերի խորամանկութիւնը և պատերազմական վարպետութիւնները, երկուքն էլ լարւած էին պահում իրենց ուշադրութիւնը:

Մի բան, որ շատ կասկածելի էր դարձնում թշնամու բռնած դիրքը, այն էր, որ մօտ ութսուն ձիաւոր, հեռուն՝ մերոնց դիմացը, իջել էին և ձիերին արածացնում էին մարգագետնի մէջ: Նրանք կէս օրից առաջ միայն մի անգամ փորձել էին մօտենալ նահանջի համար որոշած դարին և տեսնելով որ գնդակ է գալիս այնտեղից՝ քաշուել էին հեռու, և այնտեղ կարծես լոկ հանդիսատես էին լինում կուին: Նրանք ոչ յարձակում էին և ոչ մասնակցում կուին, բայց հեռանում էլ չէին: Արևը մայր մտնելուց յետոյ միայն, նրանք հեծան իրենց ձիերը և գնացին դէպի պարսից բանակի սպիտակ վրանները, որոնք պարզ երևում էին լեռան գագաթից:

Յետոյ իմացանք, որ դրանք պարսից կառավարութեան բարեկամ քիւրդերից էին, որոնք լսելով կուի ձայնը, բանակից եկած էին տեսնելու թէ ինչ է անցնում և երեկոյեան վերադարձան իրենց տեղը առանց մի գնդակ

արձակելու:

Կուրը երբեմն թոյլ երբեմն ուժեղ կերպով շարունակեց ամբողջ օրը: Երեկոյեան դէմ մեր դիմացի պարսկական բլուրների վրայ ասեղ ձգելու տեղ չկար, այնքան քիւրդեր էին ժողովել. օգնութեան եկողն այնտեղն էր իջնում: Ի՞նչ էին մտածում դրանք. վերջին յարձակման էին պատրաստում — ինչպէս իրենց սովորութիւնն է — արևի մայր մտնելուց առաջ: Ժամը 5-ի մօտ ամէն բան պարզեց: Երկու մեծ խմբերով գրոհ տւին նրանք մեզ վրայ Թաւրաւայի և Խանիկի կէտերից: Երկրորդում մերոնք գործ ունէին նաև Խանիկից հասած թիւրք զինւորների հետ: Վերջին փորձն էր այդ, որ անում էին քիւրդերը մեր դիրքերը խլելու համար: Այդ ի՞նչ վայրենի աղաղակ էր որ բարձրացրին նրանք, հապա՛ ձիերի խրխնջիւնը, հրացանների ծուխն ու որոտը... Քիւրդը այդպէս է անում ամէն անգամ, երբ յուսահատ ուզում է նահանջել, կամ վերջին փորձն անել թշնամին շփոթեցնելու և յաղթանակը խլելու:

Մերոնք դիմադրում էին հերոսաբար: Քիւրդերը իսպառ իրենց զլուխը կորցրին, երբ Թաւրաւայի ընկերներին օգնութեան հասան տղերքը. հիմա երկու կրակի մէջն ընկած էին նրանք. ուր էլ աշխատում էին փախչել, մեր «ի ն տ ո ղ - գ տ ն ո ղ» գնդակը նրանց հանգիստ չէր տալիս: Ինչպէս էին կատաղում, երբ մեր գնդակները անընդհատ զոհեր էին խլում իրենցից, մինչդեռ իրենցը միայն փոշի էր բարձրացնում մեզից 20-30 քայլ հեռու: Իջնում էին ձիերից, քարերի ետևից փորձում էին բարձրանալ բայց գնդակահար ցած էին գլորւում... Այդ ժամանակ ահա՛ ընկնում է և Ջաւար աղայի եղբայրը իր 8 մարդկանցով իսկ ինքը՝ Ջաւարը, վերաւորւում է ձակատից վախն ընկնում է իր սիրտը և այդ ամօթալի պարտութիւնից յետոյ նա առնում է իր մարդկանց ու փախչում: Այդ դիրքում մենք կորցրինք 4 ընկեր, իսկ թշնամին մօտ 30 հոգի:

Մինչդեռ այդ դիրքում կուին սկսում է մեղմանալ բորբոքւում է Խ ա ն ի կ ու մ, ուր մենք կուում ենք համիդիէների և զինւորների հետ: Արքան աշխատում ենք մի քիչ առաջ քաշել նրանց, չի լինում: Քարերի յետևից ոչ գլուխ են հանում և ոչ առաջանալու միտք ունեն: Մերոնք ակնդէտ սպասում են և բաւական է որ մի Ֆէսի կամ փաթոթի ծայր նկատուի, իսկոյն Ֆէդայու անշեղ գնդակը փոշի է հանում այնտեղից:

— Ամօթ է, ամօթ, կանչում են մերոնք. «ղոչի» կուիէ, ասպարէզ ելէք:

Բայց ո՛ւմ ես ասում. հայհոյանքներով են միայն պատասխանում:

Մերոնք մի կողմից կռւում, միւս կողմից պարում են: Լուսինը դուրս է եկել արդէն. քիւրդերը մութն ընկնելուց յետոյ կուելու սովորութիւնն չունեն և կամաց-կամաց յետ են քաշում: Հրացանաձգութիւնը դադար է առնում բոլոր կէտերի վրայ, բացի մէկից, ուր գտնւում էր հերոս Կարօն. 15-20 հոգի հաւաքած իր գլխին՝ նա կուում էր աննման քաջութեամբ, այն էլ առանց պահելու, այլ արձակ համարձակ 30-40 քայլից: Այդ միջոցին տրւում է և մեր հաւաքելու նշանը. և մեր տղերքն էլ դիրքերը թողնելով՝ հաւաքւում են ձեան մօտ, որտեղից պիտի սկսէին առաջ շարժւել:

Բայց կուրը դեռ շարունակւում է Կարօյի դիրքում: Մի տարօրինակ զուգադիպութեամբ, ո՛ւր որ գնում էր

այդ օրը Կարօն, կատարի կռիւ էր մղուում այն տեղը: Այս անգամ էլ 5-10 քիւրդ ամենայն յամառութեամբ շարունակուում էին հրացան արձակել և չէին ուզում հեռանալ: Իսկ Կարօն, — որ 2-3 հոգի արդէն վայր էր ձգած նրանցից, — իր ընկերոջ Կրետացու հետ մնում է իր դիրքում, ուզում է նրանց փախցնել և ապա երթալ միանալ նահանջող բանակին: Այդ միջոցին Կարօյի մօտ հասնում են մերձակայ դիրքերից վերադարձող վերջին ընկերները և ամէն ջանք գործ են դնում նրանց էլ իրենց հետ առնելու և որոշած տեղն իջնելու. բայց չեն յաջողում:

— «Սրանց հէրն անիծած, պատասխանում է Կարօն, ես դեռ պէտք է կուեմ»:

— «Բայց հրաման է տրւած քաշելու, տղերքը գընացին, մեզ չեն սպասի», ասում են ընկերները և իզո՛ր աշխատում են համոզել նրան:

Տեսնելով որ յամառում է նա, ընկերները հեռանում են, մտածելով որ յետևից կը գայ ու կը հասնի: Բայց Կարօն ամօթ է համարում իր թիկունքը դարձնել մի բուռը քիւրդի առջև և մնում է կուելու, չնայելով որ դեռ առաւօտեան կռիւներում վիրաւորած էր իր աջ թևը... նա էլ չի վերադառնում... նրա կողքին ընկնում է նաև մի ուրիշ հերոս՝ Կրետացին, որ չի ուզում բաժանել ընկերից...

* * *

Գիշերայ ժամը 10-ն է արդէն. լուսնի կաթնագոյն շողերը սփռած են սարերի ու բլուրների վրայ: Հեռւից լսում են դեռ հրացանների որոտը...

Վուսնի լուսով և գնդակների երաժշտութեան տակ յաղթական բանակը պատրաստուում է նահանջել Արաուից... Ֆէդայիները սկսում են իջնել, լուռ, խուճբ խուճբ, իրարից անջատ, դէպի Արաուի ստորոտը:

Օրւայ բազմազան տպաւորութիւններից գրգռած նրանց երևակայութեան առջև պատկերներ են որ յաջորդում են իրար... հրդեհի բոցերը, արիւնթաթախ դիակների կոյտերը... նրանց ականջում հնչում են դեռ ընկերների յաղթական ուռուաները, թշնամու արհաւիրից աղաղակները, կանանց և երեխաների վայնասունը... Յանկարծ ցցում են նրանց մազերը, նահատակ ընկերների, 19 քաջերի դաշկահար դէմքերն են որ առաջ են գալիս կարծես նրանց ճանապարհը կտրելու... Կանգ է առնում Ֆէդային մի վայրկեան. չդառնայ արդեօք նոր մահ ձգելու թշնամու շարքերի մէջ. չէ որ անկարելին գոյութիւն չունի այլևս իր անունի և գնդակների առջև: Բայց վարանումը մի վայրկեան է տևում. նա զինուոր է հիմա, և նոր կռիւների համար էլ պէտք են իր ուժերը... հարկը ստիպում է հիմա նահանջել, բայց առիթները չեն պակսիլ այլևս ընկերների վրէժն էլ առնելու...



(ԾՆՐՕՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ ՆՈՅՆ ԿՈՒՈՒ ՄԱՍԻՆ)

... Ամսուս (օր) սկիզբէն երեք օր ետքը, շատ մը հայեր Սաւմաստի արեւմտա-հարաւային լեռան խաղացքներուն ու փապարներուն մէջ պահուած էին: Այդ թաքստի վիճակին մէջ, անոնք մասունքի պէս պահեցին հացի ու պանիրի փտոր մը պաշարը որը շտտերնին ունէին, նեղ օրին դէմ գալու համար եւ արմատնե-

րով ու կանանչներով կերակրեցան: Պատահական ու ամենասպառնով պարագային միայն մօտիկ հովիւներէն կաթ կ'առնէին: Ամսուն օ-ի առտուն, այդ հայերը, մօտ 300 հոգի, որոնց կը քսուենք ձիաւոր էին, ժողվեցան Արաուի վրայ որ սահմանագրելի լեռներուն քարծրագոյն պարեհին է: Ամէնքն ալ աղւոր մը զինուած էին առատ ռազմամթերքով: Մէջերնին տեսակ մը զինուորական կազմակերպութիւն կար. ամէն տասնեակ տասնապետ մը ունէր, ամէն յիսնեակ յիսնապետ մը եւ ամէն հարիւր հոգի՝ իր հարիւրապետը: Բոլորը մէկանց հրամանատար մը ունէին որ քաշամարզ սպայի մը երեսոյթն ունէր: Բայց ինչ որ ուշաքրաւ է, տղաքը ճզգրիտ եւ յօժար կերպով կը հնազանդէին երեսն պետներուն, կարգապահ զինուորներու պէս:

Խանասօրի ձորը՝ որ Աղբակի գաւառին մէջ կ'իյնայ, կը տարածուի Արաուի լեռան հարաւ-արեւմտեան ստորոտը: Մազրիկ աշիրաթին վրանները այս հովտին մէջ տակաւ էին հինգ կանոնաւոր շաւղի վրայ: Ցեղապետին, Շէրիֆ աղայի երեք վրանները եւ հատ մ'ալ համիտիէ հծծելագունդի պետինը, աչքի կ'իյնային իրենց մեծութիւնով եւ ճերմակ գոյնով: Արաուի գազաթէն ամբողջ վրանակոյտը համատարած կը տեսնէր: Հայ յեղափոխական պետերը՝ որոնք դաշտաղիտակներ ունէին, տեղը մանրամասնօրէն դիտելէ եւ շրջակաները ծանցող ուղեցոյցներէ լաւ մը տեղեկանալէ ետքը, տեսակ մը պատերազմական ժողով գումարեցին: Շատ մը վիճաբանութիւնէ ետքը յարձակումի յատակագիծ մը շինեցաւ, եւ ամէն դերն ու տեղը որոշեցաւ: Օրարսակէն վերջ, քարերով խորան մը սարքեցին ուր երկու քահանայ ժամ-պատարագ ընկնով հաղորդութիւն տւին ներկաներուն: Մըթընշառին հայերը կամաց-կամաց, սուսիկ-փուսիկ սկսան իրենց առաջխաղացութիւնը: Արշալուսէն մէկ ու կէս ժամ առաջ, մագրիկացոց բնակատեղին բոլորը քանի մը քարծուները զրուեցին ու մէկէն սկսան կրակ ընել:

Քիւրդերը, յանկարծակիի գալով, չկրցին մէկանց գործել: Փոխանակ բանակատեղին մէկալ ծայրը երթալու, հոն կազմակերպելու եւ առաջ խաղալով իրենց յարձակողները վստելու, մէկիկ մէկիկ դուրս եկան. ոմանք իրենց ձիերուն կողմը վազելով: Մինչև ուրիշներ իրենց թշնամին վրայ կը քալէին: Իրենց վրաններու շարքէն դուրս ելածուն, կամ քարծրութիւններուն մօտեցածուն պէս գնդակահար կ'իյնային: Քիւրդերը ծանր կորուստ տւին, բայց գրիթէ չորս ժամ նորէն անհաւասար կռիւ մղեցին: Ամէնէն նշանաւոր քանի էր երկու պատերազմող կողմերու միջև կուելու եղանակի տարբերութիւնը: Մինչև քիւրդերը կը ջանային անընդհատ կրակ ընել. հայերը կամաց կամաց կ'արձակէին. լաւ նշան առնելէ ետք, անվրէպ պարագային միայն բլթակը կը քաշէին: Ասկէ զատ հայկական գնդակները քիւրդերունէն շատ աւելի հեռուն կ'երթային:

Շէրիֆ աղան վերադարձելով կուի վայրէն դուրս հանեցաւ. իր տղան, քանի մը ձիաւորներով, վազէվազ դրացի քիւրդերէն օգնութիւն ուզելու գացեր էր արդէն: Վերջապէս մագրիկցիները կծիկը դնելով փախան: Այն ատեն հայերը թափեցան վրաններուն վրայ և սպաննեցին անոնք որոնք ուշ մնացած էին իրենց կաները փակցնելու համար: Այս կռիւն մէջ, քիւրդերու կորուստը 300-500 կը համարուի. հայերունը 20-ի չափ որոնց մէջ երկու պետեր կային: Պէտք է ըսել իբր պատուաբեր հայերուն թէ անոնք ընդհանրապէս խնայեցին կիներուն եւ տղաքներուն: Բացի դրամէն հայերը ուրիշ աւարի շատ աչք չունեցան. իրենց ուզածը ծի էր, ան՝ ալ պէտք նշածէն աւելի ձեռք անցուցին: Շէրիֆ աղայի վրանին մէջ սնտուկ մը գտնեցաւ՝ որ շատ մը կարեւոր վկայագրերէ զատ, կը պարունակէր սուլթանի շնորհած Ֆէրմանները, եւ պատուամնշանները: Կար նաեւ մեծկակ արկղամուր մը, որով հետեւ փոխադրելը դժուար էր՝ ուզեցին կտորել, ինչ որ կարելի չէր: Այն ատեն Շէրիֆ աղային կողմը նրամայեցաւ քանակները բերել: Հագուելինը ոտքը վրանէն դուրս կոխած էր, գընդակ մը՝ հաւանաբար պատահմունք մը, գետին փոսց զան, որ ընէ ատենէն՝ հոգին փչեց:

Այս միջոցին, քանակատեղին հակառակ կողմէն, հեռուէն, քիւրդ ձիաւորներ ծայր տւին: Հայերը խոհեմութիւն համարեցին նահանջել եւ փութացին Սաւմաստի ծամբուն վրայ նայող քարծրութիւններ գրաւել: Քիւրդ ձիաւորներն ալ, քաւական հեռու, ուրիշ քարծուները զրուեցին, բայց իրենց թիւը երթալով կը շատնար: Կռիւը նորեցաւ, բայց այս անգամ՝ երկու կողմն ալ վարիջան եւ պահուտուկ կուեցան, երկուքն ալ քարերու եւ արտեւաններու ետեւէ կրակելով, առանց համարձակելու առաջ անցնիլ:

Կռիւը դադարներով գրիթէ վեց ժամ տևեց. մթնթափին երկուստեք՝ կտ քաշեցան: Հայերը դէպի սահմանագրելը չուեցին եւ հոն ցրեցան, բայց նախապէս, կ'ըսուի, համաձայնեցան ուրիշ գործ մըն՝ ալ տալ անսպասելի կէտի մը վրայ:

*

«Այս անգամ, ինչպէս յայտնի է, քիւրդերն էին զոհերը եւ կոտորողները՝ հայերը: Մահմանազլիի մօտ, Աղբաւում, օգոստոս 6-ի, լուսաղէմին, հայերը յարձակում գործեցին քիւրդերի վրայ: Ամբողջ երեք քսոտոր ժամ քիւրդերի վրամների վրայ գընդակները կարկոտ պէս էին թափուում: Քիւրդերի մէջ տիրեց սարսափելի պանիկա: Տաւարների, ձիերի աղաղակները, նրանց դէս ու դէն նետուելը աւելի եւս սաստկացնում էին, սարսափը: Գըրան յաջորդեց ձեռնամերձ կռիւը սրերով ու սեղաներով, թէեւ քիւրդերի մեծ մասը արդէն սպանուած կամ վիրաւորուած էր: Հայերը, գոռում գոչումով սրերի ծայրերով ճանապարհ քայլին, նետուեցին վրամների վրայ եւ սլացան զլիւսաղապէս դէպի քիւրդը քանակի սրտում գտնուող երեք մեծ ու սպիտակ վրամները, յուսալով գտնել դրանց մէկն ու մէկի մէջ Շէրիֆ քէյին: Վերջինիս արդէն մեռած գտան: Մի ժամ յետոյ բոլոր վրամները կրակի էին մատնուած, տաւարը սպանուած կամ ցըրուած: Հարեւան մի քիւրդը ցեղ եւ թիւրք կանոնաւոր զօրքը յգնութեան հասան, քայց այս անգամ եւս հայերը յաղթող հանդիսացան: Կռիւը տեւեց մինչեւ ուշ երեկոյ: Հայերը խմբերով սկսան յեռ նոստանշել, իրենց առջեւից ու հետեւից ունենալով փորթիկ հրացանածիգ զնդեր, որոնք ամենայն քաջութեամբ պաշտպանում էին նահանջողներին: Հայերի քննած դիրքերը հիանալի էին, այնպէս որ անկարելի էր նրանց այդ տեղերից դուրս քերել: Մութ գիշերը բոլոր հայերը արդէն հեռացել էին, թողնելով պատերազմի դաշտում միայն 11 հոգի սպանուածներ, մինչդեռ քիւրդերի կորուստը շատ հարիւրներով կարելի է համարել:»

Գետերը ուրգի լրագրի թղթակիցը շեշտում է առանձնապէս այն կէտի վրայ, որ հայերը կարողացածին չափ իմայել են կանանց ու երեխաներին: Եթէ իրենք քիւրդերը լինէին յաղթողները, հազիւ թէ այդպէս վարուէին:

Քիւրդը ցեղերը համակուած են անբուժելի ահով հայերի նըկամումը:

C.-Иемерджурекан Висо.мочта

Ն Ա Մ Ա Կ Բ Ա Ղ Ե Յ Է Ն

27 օգոստոս 97.

Վառաժարութիւնը ոչ մի միջոց չի խնայեր ձերբակալելու համար Աղբաւը, որուն անունը թէ՛ կուսակալութիւնը և թէ՛ քիւրդերը ահ ու սարսափի մէջ կը պահէ:

Երկար փորձերէ ետքը կառավարութիւնը սա համոզման յանգած է թէ՛ Աղբաւը աներեւոյթ զօրութիւն մըն է, որը անհնարին է ձեռք ձգել Այդ բոլոր խստութիւններուն հակառակ, Աղբաւը կառավարութեան քթին տակ իսկ կը շարունակէ իր գործունէութիւնը:

Ամիս մը առաջ, մօտ 30 հասնանցի քիւրդ ձիաւոր Թեղուտ դիւղի տաւարը կը քշեն: Աղբաւը իմացածին պէս կը վազէ, չորս ընկերներով միայն, յարձակիլ քիւրդերուն վրայ և ետ առնել աւարը:

Կատաղի կռիւ մը տեղի կ'ունենայ. քիւրդերէն 2-3-ը տաւարը կը քշեն, մնացածը կռիւը կը շարունակէ, մինչև 5-6 ժամ: Մերիները ջնսյելով իրենց ափ մը թւին, առիւծի պէս կը կռւին: Գիշերուան ժամը 1-ին կը վերջանայ այդ հերոսական ճակատամարտիկը: Քիւրդերը կը յաջողին, շնորհիւ իրենց շատերութեան, փախցընել արջանները, բայց կուր տեղը կը թողուն քանի մը սպաննւածներ և քանի մը վիրաւորներ: Մեր քառեակը, մէկ մազերնին չխոտած, հրացանը ուսին, կը շարունակէ իր ձամբան, առիւծին բաժինը որոնելու համար: . . .

Օրեր կ'անցնին, յանկարծ լուր կը տարածուի թէ այս ինչ տեղ երկու զափթիէ անհետացած են, ուրիշ տեղ մը քիւրդերու կարաւանի վրայ յարձակած են կամ այսինչ հայ գիւղի թալանը ետ բերուած է և լին: Վերջապէս Աղբաւը իր Գաչնակցական աներեւոյթ պղտիկ ուժով

պահապան հրեշտակն է դարձեր այս կողմի հայ գիւղերուն և Ազրայէլը՝ իր թշնամիներուն:

Ամսուս սկիզբը կարմունջ գիւղին մէջ տէրրօրի ենթարկեցաւ Գրիգոր անուն մատնիչ մը, որուն չարիքները թէ ժողովուրդին և թէ յեղափոխութեան գործին չափն անցած էր: Այդ առթիւ ձերբակալեցան քանի մը անձեր, որոնք իրենց անմեղութիւնով անցած դարձածներէն ոչ մէկ տեղեկութիւն ունին: Առաջընէ ալ 50 հոգիի չափ բռնուած կային, բոլորովին անմեղ ու անպարտ մարդիկ, որ մինչև հիմա, եօթն ամիս է, առանց դատաստանական քննութեան, ազտոտ ու դարձահոտ բանտերու մէջ կը տառապին:

Քաղքիս թիւրք խուժանին մէջ տեսակ մը իրարանցում կը տիրէ, անձնուրացներու խմբակներ կը կազմին մէկ քանի մոլեռանդ շէյխերու գրգռումով:

Չնչին առիթի մը կըսպասեն նորէն հայերու կոտորած մը առաջ բերելու համար, թէև կառավարութիւնը այս խառնաշփոթ ժամանակին այդ տեսակ դիտումներէ հեռու կը պահէ ինքզինք:

Գալով տեղիս հայ ժողովուրդին՝ այս ամէն բաները ակներև տեսնելով, անձնապաշտպանութեան համար հոգն անգամ չ'ընեն. պղտիկ շարժում մը ընել չ'ուզեր իր անզգայացած վիճակը ցնցելու համար. իր մարմնին մէջ միակ ջիղ մը կայ, դրամ դիզելու տենջը, որուն պաշտումին առջև իր կեանքն իսկ կ'ողջակիզէ: . . .

Անակնկալ փորձանքները կը ժամանեն, տարիներով վաստակածը, քանի մը ժամէն կամ քանի մը վայրկենի մէջ, փուճ կ'ըլլան, ու դեռ չեն խրատելի մեր հարուստները ու ձեռք չեն կարկառեր հայ յեղափոխութեան, որ անձնւիրութեան անսպառ աղբիւրներ ունի իր մէջ: . . .

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Զ Ն Կ Ա Յ Է Ն

22/3 օգոստոս.

Մխիթարական ոչինչ ունիք. ընդհակառակը յուսահատութիւն պատճառելու չափ օր օրի կը գէշնայ մեր վիճակը: Վառաժարական կեղեքում, հարստահարութիւն մէկդիէն, թիւրք ու քիւրդ ժողովուրդին սանձարձակ խժոժական արարքները, սպանութիւնները, բռնաբարութիւնները մէկալ կողմէն, հացմուր և տարաբախտ հայ ժողովուրդը աներեւակայելի թշուառութեան մատնած են:

Եթէ երբեք տեղական թերթ մը ըլլար, լման չորս էջերը կարող էր միմիայն առօրեայ ցաւագին և սըրտաձմիկ ըլլելով լեցնել:

Այսքան վայրենութիւններու և անգթութիւններու առջև սիրտ դիմանալու համար, մարդ երկաթէ կազմ ունենալու է: Կառավարութեան հետ չէ միւր գործը, հապա կառավարութիւն պաշտօնական անունին տակ աւազակային հսկայ կազմակերպութեան մը հետ, որ կ'առաջնորդի մարդկային ամէնէն զազիր թելադրումներէն:

Սրտերնիս կսկիծով ու վայրոյթով ուռչած՝ ամէն օր ականատես կ'ըլլանք մեր հարազատ եղբայրներու ու քոյրերու կրած թշնամանքին, չարաչար խողխողումին ու լլկումին: Հայը կ'որսան, կըսպաննեն, ինչպէս կը նեն վայրի անասունները:

Վատարւած սարսափներու առջև ապշած և մրտա-
տանջ մարդ կը տատամսի երբ գրիչը ձեռք կ'առնէ.
աղէկտուր դէպքերու անվերջ շարայարուժը կ'այլայլէ
և կը խռովէ մտքի հանդարտութիւնը: Հապճեպով հա-
զիւ կրնանք գրել շատերու մէջէն հետեւեալ քանի մը
դէպքերը, որոնք կը գործադրւին վեց տէրութիւննե-
րու երաշխաւորութիւնը վայելող հողին վրայ:

Մըթըննի գիւղէն խուճը մը երիտասարդներ, ան-
տառէն փայտ կտրելէ վերագարձին, խուճը մը զինւած
դարանակալ թիւրքերէ յարձակում կը կրեն. իրենցմէ
հազիւ մէկ քանին կը պրծին փախչելով, իսկ չորսը
գնդակի և դաշոյնի մահացու հարւածներու տակ, մա-
համերձ կը փոխադրւին կառավարատուն: Բոլոր բողոք-
ները ջրի ձայն եկան կառավարութեան ականջին. չա-
րագործները հանդարտ խղճով ու թեւերնին փարտե-
լով ման կուգան: Չերբակալու մը պզտիկ ձեւակեր-
պութիւնն ալ չնեղեց զիրենք:

Վարմրի գիւղէն երիտասարդ մը քաղաք գալու ա-
տեն, ճամբան՝ զինւած ծանօթ թիւրքէ մը յարձակում
կը կրէ, բայց երիտասարդին յանդգնութիւնը զինավափ
կ'ընէ մարդասպանը, որ իր խայտառակած պատիւը
ընկերներուն առջև վերահաստատելու համար, կը մը-
տադրէ քաղքին մէջ սպաննել զինքը. երիտասարդը
այս անգամ ալ ճարպիկ փրթաւ:

Քաղքիս նշանաւոր հայ գերդաստանի մը 1,000 ոս-
կիով շինած ջրաղացքը, Բովան գիւղի մօտ, թիւրք ծա-
նօթ թշնամիներ գիշերով կրակեցին. այժմ մոխրակոյտ
մըն է միայն: Վառավարութիւնը գիտէ. բայց բողոքել
կարելի չէ. որովհետեւ միակ շահը՝ թիւրքերու աղտոտ
ատելութիւնը պիտի ըլլայ:

Քաղքէս քանի մը ժամ հեռու Յանձիկ գիւղին հայ
բնակիչները տուրքի համար հարկահաններէն անհնա-
րին տառապանքներ կրելով, իրենց օրապահիկի վերջին
յոյսը կազմող անասունները կը յանձնեն երեք երի-
տասարդներու Յովհաննէս Վիրակոսեան, Վարապետ
Մարկոսեան և Վիրակոս Յովակիմեան, որպէսզի քաղաքին
մէջ ծախսեն և գոյացած դրամով իրենց տուրքը վճա-
րեն: Այս տխուր գործը լմնցնելէ ետք՝ երեք թշուառ
երիտասարդները երբ քաղքէն կը վերագանային, ճամ-
բան՝ Վրուձավուկ և Վալաճուկ քրդաբնակ գիւղերու
կուշտը՝ լեռան վրայ անծանօթ չարագործներէ կը
կողոպտուին և կըսպաննուին. ասոնց հետ կըսպաննուի
նաև փերեզակ մը, որ այն պահուն կ'ուղեկցէր անոնց:
Չորս դժբախտներու դիակները կառավարական քննու-
թենէ մը ետք թաղւեցան սուսիկ-փուսիկ. կառավա-
րութիւնը հիմա կեանքներու կեանքին հաւու չափ
ալ արժէք չի տար:

Անցածները Գէլնցի գիւղացիները ահ ու սարսափի
մէջ կ'իյնան. բարեբախտաբար աժան կ'ազատին: Խուճը
մը զինւած քիւրդեր, մթնշաղին, Վապուտիկեան Մարուգ
աղայի տան վրայ կը յարձակին, դուռը կը խորտակեն
և ախուէն երեք ձի միայն դողնալով կը մեկնին — թերևս
չգիտանալով ժողովուրդի լաց ու կոծին — առանց ուրիշ
բանի դպելու: Այս գիւղը հայաբնակ է, քաղքէս եր-
կու ժամ հեռու: Յափշտակած ձիերէն մինակ մէկը
տանտիրոջը կը պատկանէր, երկուքը ուրիշինն էին:

Հունձքի այս տաք ու տագնապալի ժամանակ, խեղճ
հայ երկրագործը ձեռքը ծոցը, կեանքի ու մահու մէջ
կը տարուբերի. ապահովութիւնը բացարձակապէս չէր է:

Մոլեկան ու ռիսակալ թիւրքը պարտեզներուն ու այ-
գիներուն մէջ հանգիստ չի ձգեր հայը. ամէն լիտու-
թիւն, անօրէնութիւն թողատուած է իրեն, ոչ հարցնող
կայ, ոչ դատող: Նորերս՝ գիւղագնաց պարկեշտ հայ կի-
ներու վրայ բռնաբարութեան կրկին դէպքեր պատա-
հեցան, քաղքէս քառորդ ժամ հեռու՝ նոյնիսկ զինուոր-
ներու կողմէ:

Այս անելանելի դրութեան մէջ ի՞նչ ընէ հացմուր
ու հալածական հայ ժողովուրդը. տունը անօթութիւ-
նը կըսպասէ իրեն, իսկ դաշտը անպատուութիւնը ու
խայտառակութիւնը:

Ե Ի Ր Օ Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Է Ն

Nord-ին կը նուագրեն Պեդրըրգէն հուլ. 13-ին: Եկատելով
որ նոր կոտորածներու առթիւ նայերը պաշտպանելու միջոցներ
ձեռք առնելու մասին եւրօպական դատախազներուն պահանջու-
մներուն Բ. Գուռը տարտամ պատասխաններ տուած է, մեծ տե-
րութիւնները դիտել տին սուլթանին թէ միւսիւրման ավերակի
կատարելիք ամէն մէկ մուսուլման -- խճճակաւն արարի նստար,
սուլթանը միայն պատասխանատու պիտի ըլլայ Եւրօպայի սուլթան:

Daily Telegraph-ի վիէննայի թղթակիցը իմացեր է որ
դեսպանները մօտերս սուլթանէն ահապահանջեն հայաստանի
բարենտոտութեան ժամանակ օրէնքներ նշակել:

Revue des Revues. Թիւր այդ յայտարարութիւնը (Դրօշակի)
խորհիլ տայ զանազան ազգերու համթօմները: Դիւանագիտական
նենգութիւններէն ու նրքութիւններէն աւելի մեծ քան մը կայ,
խորին զգանցն է առ որ ազգերը կը համակէ այդ միջոցները
զործածողներուն նկատմամբ: Հոն թերեւս կը գտնուի վտանգը քա-
ղաքական ռեժիմին որուն տակը կը փոքին մասնաւոր անոնք,
որ պաշտօն ունին պաշտպանելու զան:

Times. Հայոց պատրիարքը լուրջ դիտողութիւններ ըրած է
սուլթանին նայերու կամայական ձեռքակալութեան ու բանտար-
կումներու մասին: Սուլթանը իր գոնձակութիւնն է յայտնած
դիտողութիւններու նստարձակութեան առթիւ եւ ապահովուցեր
է թէ այդ նաքը լուրջ քննադատութեան կենթարկի:

Agence Hava: -ը հոկտեմբեր 20-ին կը հաղորդէ եւրօպա-
կան մամուլին թէ Պօլսի մէջ կըմտասի այս յնդակոխակէսնե-
րու նոր հարւածներուն: Մայրաքաղաքի ոստիկանութիւնը զօրա-
ցուցած են եւ պահստարներ թիւր կրկնապատկած: Փարիզի,
Լոնտօնի եւ ժընևի ոստիկանական իշխանութիւնները իմաց տը-
լած են Պօլսի ոստիկանութեան վեցեակ մը դաւադիրներու մեկ-
նումի մասին, բայց տակաւին անոնց հետքը գտնուած չէ:

Standard. Նորերս կառավարութիւնը խոստացաւ պատրի-
արքին անպայման կերպով սզատել 60 նայ բանտարկեալներ,
որոնք անմեղ ճանչցուած են: Բայց կարը պատրիարքին անձա-
կան երաշխաւորութիւնը պահանջեց անոնց բարի վարքին համար:
Երաշխաւորութիւնը տրեցաւ, բայց դեռ չեն ազատուած: Պալատի
պաշտօնեաները կը խօսին թէ հայ կոմիտէները նոր ցոյց մը կը
պատրաստեն ամսուն վերջը. եւ այս անգամ Երուզակ դէմ: Պա-
լատին մէջ անձկութիւն կը տիրէ այն լուրին վրայ թէ տէրութիւն-
ներու հիւպատոմները հրաման ստացած են Ասատուի կոտորած-
ներու ատեն կեանքի եւ գոյքի կորուստներուն մէկ վիճակագիրը
պատրաստելու:

Le Sémaphore. Սուլթանի զննակալութեան տարեկարծի
զեշերը արգիլւած էր հրակաղ: Երկիւղ կար թէ կոմիտէները
կարող են օգուել այդ պարագայէն եւ ուռնքեր նետել:

Daily Chronicle. Փոքր-Ասիայէն կողմ եւրօպացի մը, կը
հաւատտէ թէ ամէն բան պատրաստած են նոր կոտորածներ ըս-
կելու նստար հայաստանի մէջ: Թիւրքերը Պօլսէն հրամանի մի-
այն կըսպասեն շարունակելու համար:

Նոյն թերթին կը հաղորդեն Պօլսէն. սուլթանը կը շանայ
Փոքր-Ասիոյ ամերիկեան միսիօնարներու յետ կըտուը յաշողցնել:
Եթէ ընդունի այդ կենդանի մասցած հայերու շարքը կը կա-
տարի առանց վկայի, եւրօպացիները խանգար չըլլաւուն:

Temps. Պետրըրգի օսմանեան դեսպանատունը կը հա-
ղորդէ Նսովայէ մրէմիա, -ին այդ թերթը գիտատի ընելու
համաձայնը ունեցող լուրեր, որոնց աղբիւրն իսկ կասկածելի
կ'ընէ ատոնց. այդ լուրերուն նայնով իբր թէ յնդակոխա-
կան կոմիտէի մը ձեռքով կազմակերպուած եւ զինւած հայ խում-
բեր կարգն ու նստարութիւնը վրդոված ըլլան օսմանի եւ
Սերաստիոյ նախնիներուն մէջ: Հայ կոտորածներն կենեւ

իսկ զինսն են եղեր մարթինի հրացաններով եւ ուժանակի ուսմանով: Մեծ վնասներ հասուցած են կըսուի:

Հնդսամուր նահանգապետը ծերքակալել տւած է խոռվութիւններու դրոշմները, Յուսէփ անունով մէկը եւ Կէշէկ (°) կինը, եւ հանդարտութիւնը այդպիսով վերահաստատուած է:

(Կ. Պօլսէն հոկ. 3 ինուզրի մը համաձայն Մինասեան ծառայութիւնը է ծերքակալողը իր պետին և 35 համակոններու հետ:)

Նոյնը--Թիւրք կառավարութիւնը տեղեկանալով որ բազմութիւն հայեր Պօլսի դէպքէն ետք սպաստան գտած են Պուլլարիով մէջ, պահանջեր է պուլլար կառավարութիւնէն յանձնել զանոնք՝ վերջինս պատասխանած է թէ անկարող է այդ պահանջը կատարել, ինքը կը հսկէ այդ հայերուն վրայ եւ եթէ դիտէ որ եւ է դաւադրութիւն, անմիջապէս պիտի արտաքսէ զանոնք:

Journal de Genève. Բ. Դուսն մէջ պատահած պայթիւնի ժամանակ վիրավորուածներու մէջ կան շատ պաշտօնեաներ, որոնք սարսիհահար՝ փողոց նետուած էին. պատուհաններէն:

Ն Ա Յ Ա Տ Ա Կ Ը Ն Կ Ե Ր Ն Ե Ր Ո Ւ Յ Ի Յ Ա Տ Ա Կ Ի Ն

Կօմիտէիս կարգադրութեամբ, հոկտեմբեր 10-ին, Ուստրիի Ս. Փրկիչ եկեղեցիին մէջ հանգիստաւոր պատարագ և հոգեհանգիստ կատարուեցաւ երկսեռ խուռն բազմութեան մը ներկայութեամբ Խանասօրի հոյակապ կուրն մէջ հերոսացած 19 քաջերու և Կ. Պօլսի օգոստոս 6/18-ի դէպքերուն ատեն նահատակուած ընկերներու յիշատակին: Պատարագիչը՝ Տ. Մաշտոց վարդապետ աղբու և իմաստալից քարոզ մը խօսեցաւ:

Իրիկունն ունեցանք բազմամարդ հրապարակային ժողով մը, ուր ատենախօսեցին տիկին մը և երեք պարոններ: Առաջին անգամն էր որ հայ կինը ներկայ կը գլուխէր յեղափոխական հրապարակային ժողովի մը մէջ, և առաջին անգամն էր որ հայ կին մը յեղափոխական բեմէն լսելի ընել կուտար իր ձայնը:

Կը մաղթենք որ այդ օրինակն իր հետևորդներն ունենայ և արտասահմանի տիկիններն ու օրիորդներն ալ աշխատանքի իրենց բաժինը պահանջեն Հայութեան Ս. Դատին պաշտպանութեանը գործին մէջ:

Ժողովը կատարելապէս յաջողեցաւ և ունկնդիրները մեկնեցան դո՛հ ու միտմարուած սրտով:

Հ. Յ. Դաշնակցութեան

(Հս. Ամերիկա)

Ուստրի Կօմիտէ.

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

Հ. Յ. Դաշնակցութեան ԿԵՂՐ. ՍՆԳՈՒԿՆ ստացած է.

Վարդգէս ք.-ից 1,469 ուրբլի 50 կոպէկ, Վլր. ք.-ից 1,000 ու, Ռոստ ք.-ից 716 ու, Սատանի բուրժու 506 ևս 40 ու, Մզ. ք.-ից Սմաւից 185 ու, Դեր. ք.-ից 140 ու, Ախց.-ից 71 ու, Է-ից 60 ու, Կօլխիդայից 60 ու, Կայծիկից 44 ու, Ախր.-ից 30 ու, Հայից 20 ու, Անտառից 20 ու:

Հուր քաղաքի Մասնաճիւղից՝ Տէր ողորմեա 25 ուրբլի, Էծ. օգնեա՝ 10 ու, Տէր յաջողէ 5 ու, Գառն Այ. 15 ու, Մեղու 10 ու, Ոմն 5 ու, Ս. Գէորգ 10 ու, Քաջըն զօրավար 5 ու, Պաստօն 5 ու, Տիրացու 1 ու, Շաքար 10 ու, Սուրճ 10 ու, Աղւէս 3 ու, Ազգասէր 5 ու, Աշխատող 5 ու, Հակառակ 5 ու, Ն. 5 ու, Ծերունիի ձեռքով 16 ու, Որդին գառ 5 ու, Փափաք 5 ու, Յոյս 2 ու, Առիւծ 10 ու, Ագուա 5 ու, Միամիտ 2 ու, Առողջ

եղբայր 5 ու, Մատանի 5 ու, Արծիւ 5 ու: Համագու. մար 194 ուրբլի:

Նոյն Մասնաճիւղի միջոցաւ Մակաթերսոն քաղաքից Ներսո 1 ուրբլի 50 կոպէկ, Մարիամ 50 կ., Սմբատ Ն. 5 ու, Սրապիոն 3 ու, Միքայէլ 1 ու, Սրվատ 1 ու, Աշոտ 5 ու, Սարգիս 3 ու, Արսէն 5 ու, Յ. Արզանեան 10 ու, Վասիլ 1 ու, Սարգիս 3 ու, Մկրտիչ 5 ու, Գրիգոր 5 ու, Նոյն քաղաքի խումբից 49 ու 50 կ: Համագու. մար 98 ուրբլի 50 կոպէկ:

ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆԻ ԿԵՂՐ. Կօմիտէն ստացած է.

Սամուէլ 1 Մարթինի հրացան, 1 սուրն, 20 փամփուշտ և 1 պզտիկ ռէվոլվեր, Գէորգ 600 դահեկան, Շաւարշ (Ճհուտ) 8 օսմ. ոսկի և 3 արծաթ մէճիտ, Ատրուշան խումբ 20 դհ, Հրահատի խ 20 դհ., Մաժակի խ. 20 դհ., Արզումանի խ. 30 դհ., Վանորդու խ. 20 դհ., Ջալաթի խ. 20 դհ., Ղևսկիի խ. 20 դհ., Վաչէի խ. 20 դհ., Ժայռի խ. 20 դհ., Կապարի խ. 20 դհ., Չարքեազի խ. 20 դհ., Վրէժի խ. 20 դհ., Երկաթի խ. 20 դհ., Հսկայի խ. 20 դհ.: Հրահատի խ. 76 դհ., Չարքեազի խ. 15 դհ., Ժայռ խ. 15 դհ., Ատրուշան խ. 40 դհ., Արթունի խ. 20 դհ., Երկաթ խ. 10 դհ., Մաժակի խ. 30 դհ., Վրէժ խ. 33 դհ., Արզումանի խ. 60 դհ., Վաչէի խ. 60 դհ., Հսկայի խ. 38 1/2 դհ., Կայծ խ. 18 դհ.:

Կանանց խումբերէն՝ Գօղէի խ. 74 դահեկան, Մայրպիշի խ. 35 1/2 դհ., Չինարի խ. 73 1/2 դհ., Անկէլինայի խ. 26 դհ., Արփենիի խ. 53 1/2 դհ., Սիրամարգի խ. 11 դհ., Թենիի խ., 6 դհ., Ռօզի խ. 5 դհ., Կրանպիշի խ. 5 դհ., Ժենիայի խ. 25 դհ., Մենիկի խ. 12 դհ.:

ՅՈՎԻՏ Օժանդակ Կօմիտէն ստացած է.

Փետուր խումբէն՝ Վարչակ 6 լև, Հրաբուխ՝ Նիզակ, Արծիւ, Մարախ, Մանիշակ, Երկաթ, Սպիտակ, Փայլակ, Շղթայ և Թաթուլ 4-ական լև, Կայծակ 2 լև, Ն. Թ., Ա. Մ. և Կշիռ մէյմէկ լև, Փետուր խումբի գանձանակի հասոյթ 10 լև և 10 սանթիմ:

Քէրմէնլի կայարանէն՝ Անձուիրաց և Արծիւ խումբեր 30 լև, հայ եղբայրներ՝ Ա. ի ձեռքով 6 լև, — Նոր Ջակորա՝ Մամիկոնեան խ. 7 լև, Գանձանակէն 9 լև, — Քարապունար հայ եղբայրներ 20 լև, Չրփան՝ Առիւծ խ. 11 լև, Քալաճըք՝ հայ եղբայրներ 12 լև, Պօրիսովկրատ՝ Շմաւօնեան խ. 30, ևս 103 լև, Սարգիս Պետրոսեան 16 լև:

ՈՍԿԷՅԱՆՔ քղ-ի Կօմիտէն ստացած է.

№ 11,891 25 օսմ. ոսկի, Պատգամ 30 օսմ. ոսկի, Մկ. Ա. 30 օսմ. ոսկի, Անդրանիկ խ. 29 ևս 15 դահեկան, Ռուբինեան խ. 22 ևս 16 դհ., Որոտում խ. 15 դհ., Որոտրաց խ. 19 դհ., Ապառաժ 14 1/2 դհ., Մամիկոնեան խ. 13 1/2 դհ., Վ. Պ., Ալբ Խպլիկ և Նօշրօթ 29 դհ., Ահեկեան եղբարք 13 1/2 դհ., Արասի 5 դհ., Մարակ 76 ռհ., Առիւծ 10 դհ.:

Սև-Բերդ քղ-էն՝ Հաց և Գինի 20 մէճիտ, Ասեղ 94 դահեկան, Աղատ 5 դհ., Երկաթ 5 դհ., Կարս 10 դհ., Աղատ Ն. 5 դհ., Շեղ 60 դհ., Հ. Գ. Տ. 30 դհ.:

Ժամօթ. Խմբագրութեան, Ս-Տ.-ի, Տապարի և Նաւասանդիսովի ներստուութեան ցուցակները յաջորդ անգամ:

Խմբագրութեանս գիմել հետեւեալ հասցեով՝
Rédaction du Droschak, Genève (Suisse)